№ 138 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 26 — 1908 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 26 № 138

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Базарная ул. д. Тамамшева № 16. կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10-2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է, որ ուրբաթ, 1908 թ. յուլիսի 18-ին, ցերեկվայ ժամը 12-ին, վարչութեան բնակարանում նշանակված է մրցումն աշխատութիւններ տալու, Մուխրանեան կամրուջի քարային ժասերի շինութեան համար, մօտ 300 խոր. սաժէն քանակութեամբ, յենարանների վրա և 200 խոր. սաժէն ափերին: Այն անձինք, որոնք ցանկանում են մասնակցել մրցման, պարտաւոր են անձամբ կամ իրանց հաւատարմատարների ձեռքով ներկայացնել վերոյիշեալ ժամանակամիջոցին փակված ծրարների մէջ իրանց յայտարարութիւնները, գների նշանակմամբ. յայտարարութիւններին պէտք է կցվեն անդորրագրեր գրաւական մուծնելու մասին քաղաքային վարչութեան դրամարկղը 2500 րուբլի գումարի, դրամով կամ պետական տոկոսաբեր թղթերով, ըստ կուրսի: Տեխնիկական ծրագիրը, պայմանները և տեխնիկական պայմանները ցանկացողները կարող են տեսնել յունիսի 28-ից, ամեն օր, ցերեկվայ ժամը 1-ից մինչև 2-ը շինարարական բաժնում:

(Ն. Շ.) ա. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Հինգշաբթի, յունիսի 26 ին

Ամառային շինութեան մէջ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Սազանդար

Հիւրերը, պ. պ. անդամների երաշխաւորութեամբ, վճարում են 1-ական րուբլի:
Սկիզբն է երեկ. ժամը 9-ին

(ա.) 1—1

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻ

Ծղուբեան (?) չորսդասեան օրիորդաց դպրոցի համար

Հարկաւոր է

ուսուց-ուսուցիչ բարձրագոյն կամ մանկավարժական կրթութեամբ (ուսուցչական ինստիտուտաւարտ), շաբաթական 14 դաս, տարեկան 1200 ռուբ. ռոճիկով: Խնդիրները վկայագրերով պէտք է ուղարկել մինչև յուլիսի 15-ը այս հասցէով Александрополь, Приходскому попечительству армянской церкви св. Богородицы.

Ս. Աստուածածնի ծխ. հոգաբարձութիւն.

(Ն. Ն. Շ.) ա 10—4

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ

V

Խօսելով Իզմիրլեանի, Օրմանեանի և ուրիշ թեկնածուների մասին՝ մենք ներկայումս նպատակ չունենք նրանց այս ու այն անցեալ արարքը ենթարկել մանրամասն քննութեան: Ոչ:

Մեզ համար կարևոր է մի շարք փաստերից և իրական երևոյթներից ըմբռնել այդ թեկնածուների, իբրև գործիչների, բնաւորութիւնը, որոշել (?) նրանց դաւանանքները և պարզել նրանց յատուկ գործելակերպը: Որովհետև միայն այդ իմանալով կարող ենք մենք յուսալ նրանցից որոշ սպասելիքներ և համապատասխանօրէն տալ նրանց մեր ընտրական քուէները:

Կարող են բոլոր թեկնածուներն էլ, իբրև մարդիկ, յարգելի և արժանաւոր անձնաւորութիւններ լինել, բայց ընտրող ժողովրդի համար կարևոր է, որ այդ թեկնածուները ընդունակ լինեն իրագործելու այն ծրագիրները, որ ունի ընտրողը:

Օրինակ, մեզ ընտրողներիս համար կարևոր է, որ կաթողիկոսը լինի տոգորված սահմանադրական ոգով և հակամէտ լինի ժողովրդական կամքը լսելու և յարգելու:

Նոյնպէս կարևոր է, որ կղերական ոգին, որ ձգտում էր վերջին քսան տարիներում արմատներ գցել հայկական իրականութեան մէջ, նորից փորձեր չանէ գործելու այդ ուղղութեամբ և չը կաշկանդէ մեր դպրոցական, ծխական-կուլտուրական և մի քանի այլ գործունէութիւնները:

Մեզ համար կարևոր է, որ կարգապահութիւնը և օրինականութիւնը ամուր կերպով հիմք բռնէին մեր այն բոլոր վարչական և այլ գործառնութիւնների մէջ, որոնք որևէ առնչութիւն ունեն Էջմիածնի հետ:

Մեզ համար կարևոր է, որ կաթողիկոսը ներշնչէ շիտակ և վստահելի (?) անձնաւորութեան տպաւորութիւն, որ նա պատկառանք ազդէ իր շրջապատողների վրա և որ վերջ տրվի «կամարիլիաների» գործունէութեան, որոնք ժամանակ առ ժամանակ հանդէս են եկել Էջմիածնի անցեալում:

Մեզ համար կարևոր է, որ ապագայ կաթողիկոսը յուրջ կերպով զբաղվէր կարգի բերելու այն բազմաթիւ գործերը, որոնք կուտակված են այժմ ասպարէզի վրա և վերաբերում են վարչական, կրթական և հոգևոր գործառնութիւններին:

Կաթողիկոսի առաջ դրված են շատ խնդիրներ և գործեր: Եւ կը ծագեն նորանոր խնդիրներ ու գործեր էլ:

Պէտք է նրանց մշակել և առաջ տանել:

Անշուշտ թէ Իզմիրլեանը և թէ Օրմանեանը կարող անձեր են իրանց ուրոյն արժանաւորութիւններով, բայց մենք ճանաչել ենք Իզմիրլեանին իբրև աւելի սահմանադրական, աւելի հասարակագիտական ոգի, քան Օրմանեանին. մենք նկատել ենք Օրմանեանի ունեցած գործունէութեան մէջ Էջմիածնում կղերական տրամադրութեան և ոգևորութեան ուժեղ արտայայտութիւններ. մենք տեսել ենք Իզմիրլեանի մէջ ուժեղ հետևողական գործողի կորով՝ հեղինակաւոր կամքի հետ միասին և խորութիւն մտածողութեան մէջ. մենք յայտնագործել ենք Օրմանեանի մէջ զարմանալի ճկունութիւն, որը դրական հետևանքների հետ հանդէս է բերել և աննպաստ տպաւորութիւններ գործողի դաւանանքների և հայեցակէտերի հիմնաւորութեան վերաբերութեամբ. մենք տարիներ շարունակ այնպէս ենք ազդվել, որ Իզմիրլեանի գործունէութեան մէջ մեզ հիացրել է էութիւնը, բովանդակութիւնը և անդրդուելիութիւնը, իսկ Օրմանեանի գործունէութեան մէջ քաղաքագիտութիւնը, շլացնողութիւնը և փայլը:

Այդ և դրանց նման մի շարք համեմատութիւններ մեզ բերել են այն եզրակացութեան, որ այդ երկու ուժեղ թեկնածուներից աւելի յարմարը և օգտակարը էջմիածնական կաթողիկոսական գահի համար կարող է լինել Իզմիրլեանը:

Այդ թեկնածութիւնն էլ մենք պաշտպանել ենք:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Թաւրիզ, 24 յունիսի

Յունիսի 23-ի երեկոյեան դէմ հրացանաձգութիւնը մեղմացաւ: Երկու կողմից էլ կան սպանվածներ և վիրաւորվածներ: Սատար-խանը անձնատուր չեղաւ:

Յունիսի 23-ի առաւօտեան երկարատև հրացանաձգութիւնից և Ղարադաղի ձիաւորների վայրագութիւններից յոգնած, Դավաչի, Խիաբան և միւս թշնամի թաղերի բնակիչները խնդրեցին ռուսաց գեներալ-հիւպատոսին՝ հաշտեցնել թշնամի կողմերը և խաղաղեցնել քաղաքը: Գեներալ-հիւպատոսը, ցանկանալով ազգաբնակութեանը միջոց տալ ցաւալի դրութիւնից մի կերպ ազատվելու, կօզակների հետ մեկնեց հուքիմատ, ուր ժամանակաւոր կառավարիչից պահանջեց դուրս տանել ձիաւորներին քաղաքից և բանալ շուկաները: Այստեղից գեներալ-հիւպատոսը դիմեց Խիաբան և Դավաչի: Այստեղ նրան ներկայացան ծերունիներ և օգնութիւն խնդրեցին, պատրաստակամութիւն յայտնեցին կատարել հիւպատոսի բոլոր առաջարկութիւնները, աղաչեցին յետ կանչել ձիաւորներին: Գեներալ-հիւպատոսը, հանգստացնելով նրանց, պահանջեց՝ որպէսզի երկու կողմերն էլ վերցնեն ամրութիւնները, վերցնեն զէնքերը և բանան շուկաները:

Յեղափոխականների պարագլուխ Սատար-խանը մի նամակով նոյնպէս պատրաստակամութիւն յայտնեց հնազանդվել գեներալ-հիւպատոսի կարգադրութիւններին:

Առաւօտ է. Հրացանաձգութիւն չը կայ: Հաշտութեան բանակցութիւնները շարունակվում են: Հեռագրաթելը երկու կողմն էլ գործում է:

Երեկոյեան գեներալ-հիւպատոսը այցելեց այն թաղը, ուր ամրացել է Սատար-խանը հազարաւոր զինեալ կողմնակիցներով: Հիւպատոսի անցնելու ժամանակ Սատար-խանի զինուորները կանգնած էին երկշարք՝ փողոցների երկարութեամբ: Սատար-խանը հնազանդվեց գեներալ-հիւպատոսի պահանջներին և, իբրև յարգանաց նշան, յանձնեց նրան Ղարադաղի խօթ ձիաւորների, որոնք վերցված էին իբրև գերի: Քաղաքը հանգստացաւ: Յոյս կայ, որ յունիսի 24-ին շուկաները կը բացվեն: («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 24 յունիսի

Պետ. հեռ. գործ. մի քանի հաւաստի (?) տեղեկութիւններ ստացաւ Թէհրանի վերջին դէպքերի մասին:

Ինչպէս յայտնի է, վերջին ժամանակ անգլիական միսսիայում թագնվեցին որոշ քանակութեամբ մարդիկ: Այդ առիթով պարսից կառավարութեան ձեռք առած միջոցները բողոքի հանդիպեցին անգլիական հաւատարմատարի կողմից, որ բաւարարութիւն պահանջեց Անգլիայի համար վիրաւորական գործելակերպի համար պարսից կառավարութիւնից:

Համաձայն Ռուսաստանի և Անգլիայի կայացրած համաձայնութեան, ռուսաց հաւատարմատարին իսկոյն պատուէր ուղարկվեց՝ պաշտպանելու շահի առաջ մեծ-բրիտանական հաւատարմատարի ներկայացրած բաւարարութիւն տալու պահանջը: («Հ. Գ.»)

—

Մոսկվա, 24 յունիսի

Ամբողջ երկու ժամ սոսկալի անձրև տեղաց, որից բոլոր ցածր տեղերը ջրասոյզ եղան: («Հ. Գ.»)

—

Լոնդոն, 24 յունիսի

Համայնքների պալատը երկրորդ ընթերցումով ընդունեց լեռնային բանւորների 8-ժամեայ բանւորական օրվայ օրինագիծը: («Հ. Գ.»)

—

Վիեննա, 24 յունիսի

Պատգամաւորների պալատը սոցիալ-դեմօկրատների առաջարկութեամբ միաձայն հերթական համարեց բանւորներին ծերութեան և աշխատանքի անընդունակութեան դէպքում ապահովագրելու հարցը: Ներքին գործերի մինիստրը վարչութիւնների տարափի տակ յայտնեց, որ կառավարութիւնը հոկտեմբերի 21-ին կը ներկայացնէ համապատասխան մի օրինագիծ, որի մէջ նախատեսված կը լինեն մանր տէրերին պաշտպանելու մի քանի միջոցներ: («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 24 յունիսի

Պետական Դումայի անդամներ Պէրգամենտի և Մարկով II-ի մենամարտը գլուխ չեկաւ ոստիկանութեան միջամտութեան պատճառով: («Հ. Գ.»)

—

Տրիեստ, 24 յունիսի

Երէկ տեղս եկաւ և ընդունվեց թնդանօթների պարպումով անգլիական էսկադրան փոխ-ծովակալ Դրուրի հրամանատարութեամբ, 5 զրահանաւերի և 3896 զինուորների ուղեկցութեամբ: («Հ. Գ.»)

—

Լիպցիգ, 24 յունիսի

Այրվում է Բերդիչեվի գաւառի Վախնովկա գիւղաքաղաքը: («Հ. Գ.»)

—

Բօնն, 24 յունիսի

Յունիսի 23-ի երեկոյեան յանկարծամահ եղաւ գեներալ-ֆէլդմարշալ գեներալ-ադիւտանտ բարոն ֆօն Լօէն: («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 24 յունիսի

Ձեռնարկվեց այն 44 հոգու գործի քննութեանը, որոնք մեղադրվում են սոց.-յեղ. մաքսիմալիստների յանցաւոր կազմակերպութեանը պատկանելու մէջ: Մի քանիսը մեղադրվում են իբրև Ապտեկարսկի կղզում պայթումին մասնակցելու և ռումբերով Փօնարնի միջանցքում նաւահանգստային մաքսատան գանձապահի վրա զինված յարձակում գործելու մէջ: Գործը քննվում է զինուորական-նահանգական դատարանում և կը տևէ տասը օր: («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 24 յունիսի

Ութ օր քննելուց յետոյ, Պետերբուրգի զինուորա-նահանգական դատարանի նստաշրջանը Վիբորգում յունիսի 23-ի ուշ գիշեր կայացրեց հետևեալ դատավճիռը այն զինուորների գործի նկատմամբ, որոնք դատարանին էին յանձնված քրէական պատժ. 102-րդ յօդուածի 1-ին մասով զինուորական կազմակերպութեան պատկանելու համար: Մեղադրեալներից երկուսը դատարան չեկան: Դատարանը 18-ին դատապարտեց աքսորի 6 ամսից մինչև 10 տարի ժամանակով, 8-ին՝ տաժանակիր աշխատանքների, երկուսին արդարացրեց: («Հ. Գ.»)

—

Ֆլորենցիա, 24 յունիսի

Երէկ բարձրացաւ ուժեղ փոթորիկ, որին հետևեց սաստիկ կարկուտ, որոնք մեծ վնաս տուին քաղաքին և նրա շրջակայքին: («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 24 յունիսի

Ուրբաթ գիշեր Մօնաստիրի վիլայէթում լեռներն են փախել հարևան զօրաբանակի օֆիցէրներից երկուսը, մի քանի պաշտօնեաներ, զինուորներ և շատ մահմեդականներ, ընդամենը 200 հոգի, գրաւելով զէնքերը և ռազմամթերքների արկղները: («Հ. Գ.»)

—

Բաղդիվիլով, 24 յունիսի

Հրդեհը ոչնչացրեց Ջակի կաշ-կարասիքի գործարանը և շատ տներ: Վնասները վերին աստիճանի նշանաւոր են: Հրդեհաշէջների խումբ հրաւիրվեց Բրոդից: Երկու հոգի խանձուածքներ ստացան: («Հ. Գ.»)

—

Պետրոզավօդսկ, 24 յունիսի

Պետերբուրգի դատաստանական պալատի գլխաւոր նախագահ Կրաշէնինիկովին վիրաւորողը ձերբակալվեց և երևաց, որ տեղական գործարանային բանւորներից մինի որդին է, 19 տարեկան: Նա խոստովանեց իր յանցանքը, բացատրելով մահափորձի շարժառիթը նրանով, որ պալատի նստաշրջանը մի շարք մեղադրական վճիռներ է կայացրել քաղաքական զանազան գործերի վերաբերութեամբ, որոնց դէմ բողոքելու համար էլ նա այդ քայլն արաւ: Կրաշէնինիկովի վէրքերը յուրջ վտանգ չեն սպառնում: («Հ. Գ.»)

—

Ումէս (Շվէցիա), 24 յունիսի

Յունիսի 10-ին հրդեհը ոչնչացրեց մաքսատունը, նաւահանգստի գրասենեակը և ապրանքների մեծ պահեստներ: («Հ. Գ.»)

—

Էնզելի, 21 յունիսի

Երէկ պաշտօնից արձակվեցին Րաշտի դատաւոր Զահիր-ուդ-Դովլէն և Էնզելիի կառավարիչ Զահիր-Հուզուրը, որը առաջինի որդին է: Նրանք այսօր «Կաւկազ-Մերկուրի» ընկերութեան «Константинъ» նաւով ճանապարհվեցին դէպի Բագու: Ասում են, որ նրանք, որպէս դատաւոր, ուղարկվում են Աստրաբադ:

Կառավարութիւնը այստեղի անջումանը ցրեց ամսիս 15-ին: Գաւառապետ Զահիր-Հուզուրը ձերբակալել տուեց բոլոր ծայրայեղ սահմանադրականներին, որոնցից երկուսին ծեծել է տուել: Այս վերջիններս մերձ ի մահ տառապում են իրանց տանը պառկած: Բանտարկվածներից ոմանց հետ վարվել են միջնադարեան ինկվիզիցիայի յատուկ ձևերով:

Պաշտօնից արձակվածների տեղերը դեռ թափուր են մնում: Ասում են, թէ այսօր Թէհրանից ճանապարհ է ընկել Րաշտ գալու՝ տեղապահ խանը՝ Համիդը-Սուլթանեան, իր հետ ունենալով 2500 զինուոր:

Ամսիս 14-ին մաքսատան ծառայող մի պարսիկ՝ նաւից իջնելու ժամանակ՝ չորս տեղից վիրաւորեց մաքսատան ծառայող Յովսէփ Մելքոնեանցին: Յանցաւորն անմիջապէս ձերբակալվեց և բանտարկվեց: Բժիշկները խորհուրդ են տալիս վիրաւորին՝ փոխադրվել Բագու, ուր աւելի ձեռնհաս բժիշկներ ու վիրաբոյժներ կան:

Պ. Հ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

—

1908 թ. յունիսի 23-ին: Ես, Թիֆլիսի նահանգապետ Լօզինա-Լօզինսկիս, ուշադրութեան առնելով, որ «Голосъ Кавказа» օրաթերթի № 619-ում (յունիսի 22) «Товарищи оправдываются» յօդուածով ստայօդ տեղեկութիւններ է հաղորդվում այն մասին, որ իբրև այդ լրագրի դէմ տեղական իշխանութեան ձեռք առած միջոցները հետևանք էին «Закавказье» լրագրի աղաղակներին, որոշեցի Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի 1907 թ. յունիսի 4-ի հրատարակած պարտադիր կանոնների 4-րդ յօդուածի հիման վրա յիշեալ «Голосъ Кавказа» լրագրի խմբագիր Ի. Բօգօմօլովին ենթարկել հարիւր րուբլի տուգանքի:

(„Кавк.")

ՁԵԿՈՒՑՈՒՄ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻ ԱՂԷՏԻ ՄԱՍԻՆ

—

Ամսիս 12-ի ցերեկվայ գնացքով Ալեքսանդրօպոլ հասնելուս պէս անմիջապէս սկսեցինք տեղեկութիւններ ժողովել ծանօթ անձանցից այն հասարակական օրգանների մասին, որոնք մեր կարծիքով անշուշտ պիտի կազմակերպված լինէին աղէտի չափը որոշելու և աղէտեալներին օգնելու խնդիրների շուրջը: Պարզվեց, որ այդ հարցերով զբաղված է միմիայն քաղաքային ինքնավարութիւնը, կամ աւելի ճիշտը՝ նրան կից կազմված 12 հոգուց բաղկացած մի մասնաժողով, որ քաղաքագլուխ պ. Յով. Տիգրանեանի հետ միասին շրջում է աղէտի ենթարկված վայրերը և միաժամանակ բաշխում իր տրամադրութեան տակ դրված գումարը անմիջական օգնութեան կարօտ աղէտեալներին: Իմանալով, որ հէնց այդ րօպէին մասնաժողովը գտնվում է քաղաքից դուրս, այսպէս կոչված՝ «Բօստաններ» արուարձանում, մենք անմիջապէս միացանք այդ մասնաժողովին և մի քանի բօստաններ ու վնասների որոշ տեղեր տեսնելուց յետոյ, մենք, մասնաժողովի անդամներից մէկի առաջնորդութեամբ, վերադարձանք քաղաք հեղեղի հոսանքի ուղղութեամբ դիտելու աւերումների հետքերը և աղէտեալների վիճակը:

Հեղեղը սկսվելով Ալեքսանդրօպոլի շրջակայ՝ լեռներից անցել է քաղաքի հիւսիսից հարաւ ձգվող Ջրանցքի միջով և իր յորդառատ ջրերով ու հսկայական քարակոյտերի բաղխումների ուժգնութեամբ պատռել է Ջրանցքի թաղիքները և դուրս գալով ափերից ծածկել է քաղաքի հարևան փողոցները և նրա գծի ուղղութեամբ գտնված տները մօտ 1 սաժէն բարձրութեան ջրով: Հեղեղի ոյժի մասին գաղափար տալու համար բաւական է ասել, որ ճանապարհին հանդիպած տներից շատերը, թւով մօտաւորապէս 30, բոլորովին քանդել տարել է և իր հետից թողել է այնպիսի մի անապատ, որ այժմ նոյն իսկ դժուար է որոշել նախկին տնատեղերի սահմանները: Իսկ

աւելի ամուր տները թէև ամբողջապէս չեն փլել, բայց և այնպէս բացառիկ երեւոյթներ են այն տները, որոնք այս կամ այն չափով պատռուածքներ չունենային։ Աւելորդ է ասել, որ ջրի այդ սոսկալի հոսանքը անհետ տարել է հեղեղին ենթարկւած տների և խանութների բոլոր շարժական իրերը, լաւագոյն դէպքում թողնելով միմիայն խոնաւ պատերը։ Պակաս աւերածութիւն չէ արել հեղեղը նաև բոստաններում, որտեղ իր անցած ճանապարհով թողել է աւազի և քարակոյտերի ամբողջ մի շերտ, ոչնչացնելով այս տարի սպասելիք բերքը, իսկ մի քանի տեղերում անհնար դարձնելով նոյնիսկ միւս տարուայ մշակումը։ Ամենից շօշափելի և անմիջապէս զգալի վնասներ հասել են, ի հարկէ, քաղաքի չքաւոր ազգաբնակութեան, գլխաւորապէս նախ՝ մանր արհեստաւորներին, որոնք զրկվել են իրանց տնտեսութիւնը պահող գործիքներից և համեմատաբար ոչ ամուր տներից, երկրորդ՝ բոստանչիներին, որոնք կապալով վերցնում են հողերը մեծ մասամբ քաղաքային ինքնավարութիւնից, մասամբ էլ առանձին կալուածատէրերից։ Այսպէս օր. քաղաքի հիւսիսային ս. Նշան եկեղեցուց բարձր ամբողջ մի թաղ, որտեղ բնակվելիս է եղել ազգաբնակութեան աղքատագոյն մասը, ներկայացնում է կատարեալ հարթութիւն, ծածկված նախկին տների առանձին բեկորներով, ինչպէս նաև բոստանչիների աղէտին ենթարկված մասը ոչ միայն զրկվել է ցանքսի համար իր արած ծախսերից, սպասվելիք բերքից, որ կազմում է նրա տնտեսութեան միակ յենարանը, այլ և կամ արդէն անօգուտ կերպով վճարել է տարուայ կապալավարձը և կամ վճարելու վտանգի է ենթարկված, մանաւանդ եթէ նա կապալով վերցրել է մասնաւոր հողատէրերից։ Բացի այս չքաւոր մասից ուշադրութիւն են դարձնում և մի քանի փոքր ի շատէ բարեկեցիկ ընտանիքներ, որոնց ամբողջ հարստութիւնը կայանալիս է եղել ընտանիքի այս կամ այն ինտելիգենտ անդամի տարիների ընթացքում արած խնայողութիւնից կամ նրա աշխատանքով ձեռք բերած թանգագին իրերից, որոնք զոհ են գնացել հեղեղին և այս րօպէիս գտնվում են միանգամայն միջոցներից զուրկ, օրվայ հացի կարօտ վիճակի մէջ։ Այնուհետև գալիս է վաճառականների մի մասը, որի ապրանքները մեծ մասամբ կամ տարված են ջրի հոսանքով կամ փչացած։ Մարդկային զոհեր բարեբաղդաբար եղել են միայն 4 հոգի։ Ասում ենք բարեբաղդաբար, որովհետև աչքի առաջ ունենալով հեղեղի չափը, ջրի բարձրութիւնը, աղէտի յանկարծակի գալը և երեկոյեան ժամանակը՝ անպայման աւելի շատ կը լինէր զոհերի թիւը, եթէ, բոլորի համերաշխ վկայութեամբ, չը լինէր բազմաթիւ կամաւոր քաղաքացիների սրտառուչ անվեհերութիւնը, որոնք, սեփական կեանքով վտանգն արհամարհելով, բացառիկ անձնազոհութեամբ փրկել են բազմաթիւ կեանքեր հեղեղի տարերային յորձանքներից։ Զոհերից երկուսը միևնոյն ընտանիքի երկու մանուկներ են, իսկ մնացած երկուսը հասակաւորներ։

Այս մի շարք տպաւորութիւններից յետոյ մեզ մնում էր ծանօթանալ աղէտից առաջ եկած վնասների չափի, կարօտեալների թւի, անմիջական օգնութեան խնդրի և առհասարակ մեր միսիայի գործնական կազմի հետ։

Այդ տեղեկութիւնը ստանալու համար յաջորդ օրը դիմեցինք պ. քաղաքագլխին, որ նոյն երեկոյեան գումարեց մասնաժողովի նիստը, որին հրաւիրեց և մեզ։

Մասնաժողովը իր մինչև այդ օրը հաւաքած տեղեկութիւնների հետ ամենայն պատրաստակամութեամբ ծանօթացրեց մեզ։ Բայց դժբաղդաբար քանի որ ինքը մասնաժողովը դեռ չէր վերջացրել վնասներն արձանագրելու խնդիրը և քանի որ ամբողջ գործը վերջացնելու համար անհրաժեշտ է նրա կարծիքով առնուազն դեռ մի շաբաթվայ աշխատանք, մենք ստիպված էինք բաւականանալ առայժմ նրա հաւաքած և ստուգած տեղեկութիւններով և այն հաւաստիացումով, որ աղէտի ամբողջ ծաւալը որոշելուց յետոյ պ. քաղաքագլուխը կը հաղորդի լրիւ տեղեկութիւններ Կովկասի հ. բար. ընկ. խորհրդին։

Մասնաժողովը մինչև մեզ հետ խորհրդակցելը կարողացել էր շրջագայել միայն քաղաքի հիւսիսային մասը մինչև Բէհբուդեան փողոցը, միջին մասը՝ մինչև Պուշկինի փողոցը և վնասված բոստանների մեծ մասը (մօտաւորապէս 52 դես.)։

Հիւսիսային մասում, որտեղ, ինչպէս ասացինք, բնակվում է քաղաքի չքաւոր ազգաբնակութիւնը և որտեղ քանդվել են 30 տնից աւելի, վնասները մասնաժողովի հաւաքած տեղեկութիւնների համաձայն կազմում են 71,290 ր., միջին մասում—30,000 րուբ., իսկ բոստաններում—26,000 րուբ.։ Այսպիսով ուրեմն ամսիս 13-ի երեկոյեան արդէն ստուգված և վկայված էր 127,000 րուբլուց աւելի վնաս։

Մի քանի ժամ անձամբ մասնակցելով մասնաժողովի աշխատանքներին և ծանօթանալով նրա անդամների անհատական հայեացքներին իրանց յանձնված հասարակական աշխատանքին, մենք կարևոր ենք համարում շեշտել, որ պէտք է կատարեալ հաւատով վերաբերվել նրա տուած տեղեկութիւններին և մանաւանդ թւերին, որոնք կազմում են աղէտից առաջ եկած վնասների մինիմումը։ Մասնաժողովի անդամների համոզմունքով, քաղաքի դեռ չը շրջագայած և չարձանագրած վայրերի թւերն էլ գումարելով, հեղեղի հասցրած վնասները պէտք է հաշւել առնուազն 250,000 ր.։ Մի հանգամանք, որ ինքնըստինքեան Ալէքսանդրապոլի նման տնտեսապէս թոյլ և մանր արհեստաւորական քաղաքի համար մի սոսկալի աղէտ է։ Այդ աղէտի դէմ կռւելու համար մասնաժողովը—Ալէքսանդրապոլում այդ հարցով զբաղվող միակ հասարակական օրգանը—իր տրամադրութեան տակ ունէր յունիսի 12-ին հետևեալ միջոցները։

Քաղաքային ինքնավարութեան նուիրած 1000 րուբ. նիւթականապէս օգնելու վնասվածներից ամենախեղճերին և առաջին անհրաժեշտութեան իրերի կարիք ունեցողներին։ Նոյն քաղաքային ինքնավարութեան նուիրած 2000 րուբ., որը պիտի արվի փոքր ի շատէ երկար ժամանակով իբրև փոխառութիւն այն չքաւոր աղէտեալներին, որոնք կը ցանկանան վերանորոգել իրանց փլած տները և կամ նոր տներ կառուցանել ջրանցքից հեռու՝ քաղաքի ապահով մասերում։ 1000 րուբ. Թիֆլիսի նպաստամատոյց յանձնաժողովի նուիրած, 150 րուբլի գերասան Զարիֆեանի՝ աղէտեալների օգտին տուած ներկայացումից, 16 րուբ. Հին-Նախիջևանից ստացված նուէր և Կովկ. հայոց բարեգ. ընկ. խորհրդի՝ մեր միջոցով յատկացրած 500 րուբլին, ընդամենը 4616 րուբլի։ Սպասվող մեծ օժանդակութիւնը 50,000 րուբ. փոխառութիւնն է, որի համար քաղաքային ինքնավարութիւնը յարուցել է միջնորդութիւն երկրիս կենտրոնական վարչութեան առաջ, և դժբաղդաբար՝ չը նայելով խնդրի կարևորութեան՝ մինչև այժմ ոչ մի պատասխան չը կայ։ Քաղաքային ինքնավարութիւնը բացի դրանից մտադիր է 1) ազատել իր կապալառու բոստանչիներից չքաւորներին այս տարուայ կապալավարձից, 2) տալ իբրև փոխառութիւն աւերված տների տէրերին քաղաքի աւելի ապահով մասերում քաղաքային հողերից՝ տներ կառուցանելու, 3) տալ քաղաքին պատկանող և կապալառուից ազատ քարհանքը «Զորի-Բօղազ» անունով, որտեղից ցանկացողները կարողանան ձրի քար բերել իրանց տները վերաշինելու համար։

Քննելով մասնաժողովի տուած տեղեկութիւնները, որոնք՝ ինչպէս ասացինք՝ դեռ լրիւ չեն, և անձամբ շրջագայելով ու դիտելով աղէտված վայրերը, մենք անհրաժեշտ ենք համարում այստեղ առանձնակի շեշտել օգնութեան այն չափը, որ պիտի անպայման տրվի Ալէքսանդրապոլի այն աղէտեալներին, որոնք անմիջական օգնութիւն չը ստանալու դէպքում մատնված պիտի լինեն ամբողջ տարի անանկ և քաղցի դրութեան, մի դրութիւն, որ տարերքի աղէտից աւելի վտանգաւոր այնպիսի հետևանքներ կարող է ունենալ, ինչպէս տարափոխիկ հիւանդութիւնների ծաւալումը և գործազրկութեան հետ կապված բոլոր հասարակական էկցեսները։ Մեր կարծիքով, նոյնիսկ այս րօպէիս կարելի է մօտաւորապէս հաշւել 60 ամենաչքաւոր ընտանիք, որոնք զրկված իրանց տներից, տան կահ-կարասիքներից և բոստաններից՝ կանգնած են սովի ուրուականի առաջ, սպասելով դրսի օգնութեան։ Այդ 60 ընտանիքին մեր համոզմունքով անհրաժեշտ է անմիջական օգնութիւն հասցնել այն նպատակով, որ նրանք կարողանան նախ և առաջ քաղաքային ինքնավարութեան աջակցութեամբ իրանց տները վերաշինել, երկրորդ՝ ձեռք բերել տան կահ-կարասիք կամ իրանց արհեստների ամենաանհրաժեշտ գործիքները և առ ժամանակ կարելի լինի մատակարարել նրանց մթերքներ։ Այդ բոլորի համար մեր համոզմունքով և մասնաժողովի տուած տեղեկութիւնների հիման վրա արած հաշիւներով առժամանակ, բայց և անմիջապէս հարկաւոր է դիմել անհրաժեշտ միջոցների և օգնութեան հասնել աղէտեալներին առնուազն 20 հազար րուբլու գումարով, որով կարողանային գոնէ ամենաաղքատ մասի ժամանակաւոր դրութիւնը բարւոքել։ Այդ 20 հազար րուբլու օգնութիւնը անշուշտ պիտի գայ դրսից, գուցէ նախ և առաջ դուրսը ապրող Ալէքսանդրապոլի ունեւոր անհատներից, քանի որ ամբողջ Ալէքսանդրապոլի պրիմիտիւ տնտեսութիւնը կարելի է ասել բերել է ազգաբնակութեան ճնշող մասը չքաւորութեան մի յայտարարի։ Գոնէ սա է տեղական ինտելիգենտներից շատերի կարծիքը։

Ահա աղէտի մինչև յունիսի 13-ը ստուգված պատկերը և աղէտեալներին օգնութիւն հասցնելու գործի դրութիւնը. մի դրութիւն, որ հազիւ թէ լուրջ գրաւական համարվի աղէտի դէմ մաքառման աջող ընթացքի։ Չը խօսելով այն բանի մասին, որ մասնաժողովի տրամադրութեան տակ գտնված միջոցները չափազանց չնչին են կարիքի համեմատութեամբ, իրերի վիճակը բարդանում է մանաւանդ շնորհիւ այն հանգամանքի, որ այդ լուրջ գործի՝ չը նայելով իրանց տոկունութեան և արտասովոր եռանդին, այնուամենայնիւ հազիւ թէ կարողանան միայն իրանց սեփական ոյժերով լուծել աղէտեալներին օգնելու բարդ և պատասխանատու խնդիրը։ Այստեղ մենք չենք կարող չարձանագրել այս տխուր փաստը, որ օտար մարդու ուշադրութիւնը գրաւում է իր վրա Ալէքսանդրապոլ մանե-լու հէնց առաջին օրից։ Դա այն տարօրինակ անտարբերութիւնն ու անկազմակերպ վիճակն է, որ ներկայացնում է իրանից Ալէքսանդրապոլի գիտակից և ինտելիգենտ մասը, որի գործակցութիւնը քաղաքային ինքնավարութիւնը երևի կարագացնէր ցուցակագրելու նախապատրաստական աշխատութիւնները և աւելի րացիօնալ հիմքերի վրա կը դնէր օգնութեան խնդիրը։ Այս րոպէին ամբողջ օգնութիւնը տարվում է ամենապրիմիտիվ ձևով. ամենից աչքի ընկնող աղքատներին բաժանում են 5—10 րուբլի փող մի առժամանակ ապրելու մինչև մօտագայ ապագան, որի վերաբերմամբ ևս տածում են միմիայն անորոշ յոյսեր։ Ոչ մի խօսք ոչ հասարակական աշխատանքի մասին (մանաւանդ որ ջրանցքի փլուածքները հէնց այժմեանից վերանորոգվում են), ոչ թէյարանների և ճաշարանների մասին և ոչ էլ առհասարակ օգնութեան այնպիսի մի ձևի մասին, որ կրէր իր վրա հասարակական կազմակերպութեան կնիք։ Այս բանի համար ամենից քիչ կարելի է մեղադրել քաղաքային ինքնավարութիւնը յանձին պ. քաղաքագլխի և մասնաժողովի անդամների, որոնք ստիպված են վարելու իրանց վիճակված աշխատանքը ծանր անտարբերութեան մթնոլորտում։ Այսպիսի պայմաններում կրկնակի անհրաժեշտութիւն է զգացւում Կովկ. հայոց բարեգ. ընկերութեան տեղական ճիւղին, որին թէրևս աջողվի իր շուրջը համախմբել ազգաբնակութեան եռանդուն և գիտակից տարրերը առանց այն տեղական շահերի տարբերութեան, որ բնորոշում է Ալէքսանդրապոլի հասարակական կեանքը։ Այդ ճիւղն էլ բացվելու է յաջորդ կիրակի օրը, երբ կընտրվի տեղական վարչութիւնը, որ մտնելով մասնաժողովի կազմի մէջ՝ պէտք է ենթադրել կը մտցնի իր հետ և հասարակական նախաձեռնութիւնը։

Կովկ. հայոց բարեգործական ընկերութեան խորհրդի լիազօրներ

Խորհրդի անդամ՝ Ալ. Պապովեան

Երևանի ճիւղէ վարչութեան անդամ՝

Իշխ. Յ. Արղութեան

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

„Кавказъ" լրագիրը № 109-ից սկսած մի շարք յօդուածներ է նուիրել հայոց դպրոցների խնդրին, ուր նախ յօդուածագիրը ձգտում է ապացուցանելու, որ 1836 թւի պօլօժէնիայում եղած յօդուածները հայոց հոգևորականութեան իրաւունքների մասին նախ չեն արգելում, որ կառավարութիւնը հսկողութիւն ունենայ հայոց դպրոցների վրա, երկրորդ՝ որ այդ իրաւունքները պօլօժէնիայի տեսքի մէջ նոյնիսկ ոչ մի յօդուածով իրաւունք չէր տրված դպրոցական խնդրում հայոց հոգևորականութեան, երրորդ՝ որ հայոց հոգևորականութիւնը և հայ ժողովրդին ամեն տեսակի դպրոց բանալու իրաւունք տալը և հայերի աւտօնօմիան այս խնդրում միանգամայն անարդարութիւն է կովկասեան միւս ազգերի վերաբերմամբ։ Այդ յօդուածներում նոյնպէս շատ պարզ կերպով ասված է, որ նոյնիսկ էջմիածնի կաթողիկոսը պիտի ամենայն հայոց հայրապետ չը համարվի, այլ ռուսահայերի պատրիարք։

Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ այդ յօդուածներում արտայայտված գաղափարները միանգամայն հակապետական են, որովհետև նրանք չեն համապատասխանում լուրջ կերպով հասկացված պետական շահերին, այլև զուր տեղը նոր վրդովմունքներ պիտի առաջ բերեն,—մենք աւելորդ չենք համարում մի քանի խօսք ասելու այդ յօդուածներում յայտնված փաստերի հիմունքների սխալ լինելու մասին։

Նախ յօդուածագիրը ոչ մի խօսք չէ ասում, որ բացի 1838 թւի պօլօժէնիան 1905 թւի օգոստոսի մէկի բարձրագոյն հրամանի մէջ բացարձակ կերպով շեշտված է, որ Թագաւոր Կայսրը նորից հաստատում է հայ հոգևորականութեան իրաւունքները ժողովրդական լուսաւորութեան գործում, շնորհելով «լայն գործունէութեան» միջոցներ այս ասպարէզում։

„Мы даруемъ армяно-григоріанскому духовенству способы къ широкой просвѣтительной дѣятельности на пользу народа", իսկ երրորդ կէտում ասված է, որ դպրոցները կարող են բացվել 1874 թւի յուլիսի 19-ի կանօններով առայժմ։

Այսպիսով յօդուածագիրը ոչ միայն ցանկանում է, որ նախ կառավարութիւնը մի մեծ յետադիմական քայլ անի և 1836 ու 1874 թւերին տրված և մի երկու տարի առաջ բարձրագոյն հրամանով հաստատված իրաւունքները խլվեն, այլև բացարձակ կերպով քարոզում է բարձրագոյն հրամանի խախտման և ցանկութեան դէմ նոր խլրտումներ ստեղծելու։

Բայց մի րօպէ ենթադրենք, որ իրօք հայ հոգևորականութիւնը ոչ մի իրաւունք չէ ունեցել և այսօր միայն ցանկանում է իր ունեցած շատ սուղ միջոցները գործ դնել ժողովրդի լուսաւորութեան գործի վրա և կամենում է բանալ զանազան տիպի դպրոցներ։

Արդ, պէտք է հարցնել, թէ արդեօք ինչ տեսակէտով և ինչ պատճառներով այժմ կարելի է այդպիսի մի ցանկութեան դէմ գնալ։ Կովկասեան միւս ազգերի վերաբերմամբ անարդարութեան խնդիրը, ի հարկէ, շատ անլուրջ առարկութիւն է, եթէ չասեմ անբարեխիղճ, որովհետև ոչ հայ հոգևորականութիւնը, ոչ էլ հայ ժողովուրդը երբէք և ոչ մի բանով չեն արտայայտել, որ մենք կամենում ենք դպրոցական աւտօնօմիա ունենալ, իսկ չենք ցանկանում, որ նոյնը ունենան մեր դրացի թուրքերը կամ վրացիք։ Ընաւ երբէք։ Մենք շատ ուրախ կը լինենք, որ Կովկասի բոլոր ազգերը ամեն տեսակ աւտօնօմիա ունենան։

Դառնանք բուն խնդրին։ Ասում եմ, որ 1905 թւի հոկտեմբերի մանիֆեստից յետոյ ամեն մի մասնաւոր մարդ, ինչպէս և հաստատութիւններ, կարող են ամեն տեսակի և տիպի մասնաւոր դպրոցներ բանալ։ Եթէ հայ հոգևորականութիւնը կամենում է եկեղեցական-ծխական դպրոցներ պահել իր հաշւին, ուրեմն նա բոլորովին իրաւունք ունի և ոչ մի խելացի պատճառ չը կայ խանգարելու։

Եւրոպայում ժողովրդի լուսաւորութեան գործը ծանրանում է գլխաւորապէս պետութեան վրա։

Կառավարութիւնը ինքն է պարտաւոր հոգալու ժողովրդի համար որքան կարելի է շատ դպրոցներ բանալու։ Հայ հոգևորականութիւնը իր դպրոցներով օգնում է կառավարութեանը և թեթևացնում է նրա գործը, ու սրա համար պիտի շնորհակալ լինել, բայց ոչ խանգարել։

Մնում է մի հիմնական խնդիր լուծելու։ Դա հսկողութեան խնդիրն է։ Վերոյիշեալից պարզ է, որ ոչ օրինական և ոչ տէրութեան շահերի տեսակէտով ոչ մի հիմք չը կայ արգելելու, որ հայ հոգևորականութիւնը իր հաշւով ամեն տիպի դպրոցներ կարողանայ բանալ։ Ընդհակառակը, կառավարութիւնը, եթէ նա խելացի է, պիտի ուրախ լինի այս բանին։

Գալով հսկողութեան խնդրին՝ պէտք է նկատել, որ սկզբունքով կառավարութեան հսկողութիւնը ոչ միայն հերքելու կարիք չը կայ, այլ ընդհակառակը, ցանկալի է։ Հսկողութիւն, որ ուսուցիչները փողոցներից հաւաքած մարդիկ չը լինեն, որ ընդհանուր առարկաների վերաբերեալ ծրագիրները գործադրվեն, որ դպրոցի ծառայողները համապատասխան լինեն իրանց կոչման և այլն։

Մի բան ցանկալի է, որ դպրոցական վարչութիւնը և քաղաքացիական իշխանութիւնը առանց դատարանի և առանց յանցանքն ապացուցանելու՝ իրաւունք չունենան վարչական կարգով հեռացնելու ուսուցիչներին և պաշտօնեաներին, որպէսզի կամայականութեան ասպարէզ չը դառնան դպրոցները։ Այսպիսի հսկողութեան և հաշտեցութեան դէմ չէ կարելի լինել, և հարցը կաթողիկոսը կարող է լուծել շատ հեշտ և առանց խճճելու, իսկ այժմ շտապելու կարիք չը կայ։

Գ. Ենգիբարեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Յուլիս ամսում Թիֆլիսի դատաստանական պալատի նստաշրջանը Քութայիսում քննելու է այսպէս կոչված «Սվանէտի հանրապետութեան» գործը. այս գործի առիթով դատարանին են յանձնված 24 հոգի։ Վկաներ կանչված են 27 հոգի։

—

Թիֆլիսի գիւղատնտեսական փոխադարձ վարկի ընկերութեան կողոպտման գործը արդէն վերջացած է և յանձնված է Թիֆլիսի նահանգական դատարանի երկրորդ քրէական բաժնին։

Իբրև մեղապարտներ դատարանին են յանձնված Քութայիսի նահ. բնակիչ Ալէքսանդր Օրօլաձէ, Թիֆլիսեցի Գէօրգի Ջավարօվը և ուրիշ չորս հոգի։ Ջավարօվը երաշխաւորութեամբ ազատ է, իսկ մնացածները գտնվում են ոստիկանական հսկողութեան տակ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Շուշի, 1 յունիսի

Մեր աշակերտութիւնը վերջին տարիների ընթացքում ձեռք է բերել մի իրաւունք, որի զօրութեամբ թոյլ է տալիս իրան ամեն տեսակ փողոցային անկարգութիւններ. չէ պարապվում, չէ ցանկանում ճանաչել ոչ մի կարգ, կանօն, օրէնք, պահանջում է աւարտման վկայական տալ իրան՝ առանց նկատի ունենալու իր դատարկ գլուխը... Բայց ամենից հետաքրքրականը նա է, որ նոյն աշակերտութիւնը պահանջում է ուսուցիչներից ամենաքաղաքավարի վերաբերմունք, և այդ պահանջները ծայրայեղ բծախնդրութեան է հասցնում։

Մի ժամանակ այնքան փառաբանված տեղիս բէալական դպրոցը ընկաւ վերոյիշեալ դրութեան մէջ։ Վերջին ժամանակներս ստեղծվեց այդ դպրոցում այնպիսի մի ռեժիմ, որը անդունդ էր տանում աշակերտութեան։

Մայիսի սկիզբներին այստեղ պէտք է տեղի ունենային աւարտման քննութիւններ VI և VII դասարաններում։

Դեռ առաջին քննութիւնը չը սկսված, իմացվում է, որ ուսուցիչներից ոմանք թոյլ են տուել իրանց յայտնել «զաղտնի կերպով» աշակերտներին քննվելիք առարկայի թեման։

Փաստը վերին աստիճանի զայրացուցիչ էր։

Եւ ահա մի խումբ ծնողներ իսկոյն և եթ հեռագրով յայտնում են այդ մասին Կովկասի շրջանի դպրոցների հոգաբարձուին։ Մի քանի օրից յետոյ կարգադրութիւն է ստացվում հոգաբարձուից դադարեցնել քննութիւնները և ուղարկել իրան աւարտման քննութիւն բռնած աշակերտների գրաւոր աշխատանքները։ Բացի այդ՝ հոգաբարձուն կարգադրել է նշանակել քննութիւնները յունիսի 15-ին՝ յատուկ այդ նպատակով Թիֆլիսից ուղարկված կօմիսիայի ներկայութեամբ։

Այս նոր կարգադրութիւնները աւելի եռանդում և յուզմունք են առաջացնում աշակերտների մէջ, որովհետև նրանցից միայն մի չնչին մասն է վստահ իր ոյժերի վրա, որ կարող է գոնէ բաւարար քննութիւններ տալ։ Որովհետև տարվայ ընթացքում ուսուցիչներ Յար. Մելիքեան և Մ. Ղարաբէկեան ամենից շատ խստապահանջ են եղել, ուստի աշակերտների մի մասը համարում է այս կարգադրութեան սկզբնապատճառ նրանց, առաւելապէս՝ Մ. Ղարաբէկեանին։ Աշակերտների երկու մասի բաժանված բանակները աւելի են լարվում միմեանց դէմ։

Բնականաբար, այս լարված յարաբերութիւնը որևէ կերպ պէտք է արտայայտվէր։ Եւ ահա մայիսի 22-ին, երբ բաւական հայ և թուրք հասարակութիւն էր հաւաքվել Ղազանչեցոց եկեղեցին ճայրապետ Ղալամեանի թաղման առիթով, եկեղեցու բակում ծեծում է պ. Մ. Ղարաբէկեանին բէալական դպրոցի VII դասարանի աշակերտ Սերգէյ Յակոբեանը և, նրա հետ խօսելու պատրուակով, աքացի է տալիս նրա փորին։ Իսկոյն իրարանցում է ընկնում եկեղեցու բակում, մանաւանդ որ հէնց այդ պահուն Հ. Ղալամեանի դիակը եկեղեցուց դուրս էին բերում։ Տեղի ունեցաւ երկու բանակների միջև մի թեթև տուր ու դմբոց։ Շնորհիւ ուսուցիչ պ. Յ. Մելիքեանի լուրջ և պաղարիւն միջամտութեան, որին այնուամենայնիւ աշակերտները շարունակում են յարգել, հնարաւոր եղաւ այդ վայրենի տեսարանը կանգնեցնել, առանց որևէ լուրջ հետևանքի։

Այդ ինցիդենտի առիթով ոստիկանապետը արձանագրութիւն է կազմել և յանձնել ում որ հարկաւոր է։

Չէ կարելի սակայն լռութեամբ անցնել և մի շատ բնորոշ փաստ, որը կապ ունի այդ գործի հետ։ Մի քանի օր սրանից առաջ մեր «աստուածապահ» քաղաքի «չափազանց հոգատար քաղաքագլուխը» հրաւիրում է մի քանի ծնողների և բացատրում նրանց դպրոցական անկարգութիւններից առաջանալիք վտանգը, ուստի և առաջարկում է ծնողներին ստորագրութիւն տալ, որ իրանց որդիները ոչ մի անկարգութեան մէջ չեն մասնակցի։ Մեր «քաղաքագէտ» քաղաքագլուխը կարողանում է համոզել ծնողներին, որ այդ ստորագրութիւնները միայն ձևական նշանակութիւն ունեն և չը պէտք է նրանց լուրջ բնաւորութիւն տալ։ Ծնողները հաւատում են քաղաքագլխին և ստորագրութիւններ տալիս։ Ինչու համար են այս մութ և խորհրդաւոր ձևականութիւնները։ Արդեօք որևէ թակարդ չէ լարվել այստեղ։ Այդ էր ծնողը կարող է երաշխաւոր լինել իր որդու համար։

Կարծէք բաւական չէին այս բոլոր դառն երևոյթները, պատահել է և մի ուրիշ աչք ծակող երևոյթ, որը արձանագրել հարկաւոր ենք համարում։

Մայիսի 24-ին, ցերեկվայ ժամը 2-ին, «Թօփխանա» կոչված հրապարակում, բարձրագոյն դպրոցի ուսանող պ. Լ. Զիլֆեանը կանգնեցնում է թեմական դպրոցի տեսչի պաշտօնակատար պ. Ռուբէն Քաջբերունուն և ապտակ հասցնում նրան, ասելով. «Անայն ապտակը, որ պէտք է դուք տայիք»... Գուցէ ապտակները կրկնվէին կամ աքացիների փոխվէին, եթէ միայն «Թօփխանայում» կանգնած մշակների և ուրիշ մարդկանց միջամտութիւնը չը լինէր։ Պ. Քաջբերունին մնում է ապշած. նա ոչ մի կերպ չէ կարողանում բացատրել այդ վարմունքը, մանաւանդ որ ծանօթ չէ բոլորովին ուսանող պ. Զիլֆեանի հետ և հետը երբեք չէ խօսած։ Ուստի և իսկոյն դիմում է պրիստաւին և պատմում եղելութիւնը։ Վերջինս արդէն արձանագրութիւն է կազմել։

Ինչպէս տեսնում էք, ընթերցող, մեր քաղաքի բարքերը շատ հիանալի են։ Մի տեղ աքացի է տալիս VII դասարանի աշակերտը իր ուսուցչին եկեղեցու բակում, բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ և առաջ բերում մի խայտառակ խլրտում, իսկ միւս տեղում բարձրագոյն դպրոցի պսպղուն կոճակներով զարդարված ուսանողն է ապտակում տեսչի պաշտօնակատարին... Քիչ թէ շատ ինտելիգենտ մարդը պէտք է շատ լաւ հասկանայ, որ մարդիկ իրար հետ աքացի-ապտակներով չեն բացատրվում։ Դրա համար կան դատարաններ, ազատ խօսք և մամուլ։ Այս տարրական հասկացողութիւնը պէտք է վաղուց ըմբռնած լինէին իրանց «կուլտուրական» յոխորտացող հայ ժողովրդի ինտելիգենտ ու երիտասարդ զաւակները։

Կոզա

—

Գրօզնա, 15 յունիսի

Հայկական կեանքը Գրօզնայում, որպէս մի գաւառական քաղաքում, միակողմանի է, բայց հետաքրքրական։

Հայ համայնքը, որ կազմված է զանազան

...աշատ գաւառների գաղթականներից, ...քի է ընկնում նրանով, որ մեծ սէր ու-նեն դէպի իր ծխական դպրոցն ու եկե-ղեցին։ ...բական է ձեռնարկել մի որևէ երե-կոյթ կամ հանդէս, և անա համայնքի մեծ մասը շտապում է կատարել իր պարտակա-նութիւնը։ Իսկ կիրակի և տօն օրերին նա հաւաքվում է եկեղեցու գաւիթը «Հնից ու նորից» զրոյց անելու։

Սակայն պէտք է և այս յիշենք, որ այդ ժողովուրդը յարմար քահանայ չունի, որով-և գաղութի ծխատէր Վարդան քահ. Տէր-Սահակեանը իր պաշտօնին միանգա-մայն անհամապատասխան է որպէս հասա-րակական անձնուէր գործիչ։ Յ. Բ.

—

Շ ն ո ղ գ. (Բորչալուի գ.), 18 յունիսի

Մեր և շրջակայ գիւղերում, ուրախու-թեամբ պէտք է ասել, լայն չափով սկսել է տարածվել եւրօպական գութանների գոր-ծածութիւնը, բայց դժբաղդաբար նրա ձեռք բերելը կապված է մի քանի դժուա-րութիւնների հետ։ Կովկասեան գիւղատնտ-եսական ընկերութիւնը, որ պիտի լինէր գիւղերին բոլոր տեսակի գործիքներ և ըն-տիր սերմացու (որի պահանջը այնքան մեծ է) մատակարարող միակ հեղինակաւոր հաստատութիւնը, կարծես գիտութեամբ իր կոչմանը հակասելիս լինի։ Բացի մի քանի միատեսակ ժանգոտած գութաններից, ո-րոնք տարիներով դարսված են մնում ըն-կերութեան ունեցած պահեստի ներքևի յարկում, այդտեղ դուք ուրիշ ոչինչ չէք գտնի, և այդ ընկերութեան յուսով Թիֆ-լիս գնացած գիւղացին կամ օրերով մնում է մինչև ուրիշ տեղից ճարելը և կամ վե-րադառնում է իր նահապետական մաճին։ Չը գիտեմ, սակայն, թէ ինչ կը լինէր եւրօ-պական գութանների և այլ գիւղատնտես. գործիքների պահանջ զգացող գիւղացիների դրութիւնը, եթէ Թիֆլիսում չը լինէր Ա-ուֆէրմանի պահեստը, որին դիմել և գըտ-նել այնքան էլ հեշտ չէ։ Ո՞վ արդեօք պիտի մտածէ այդ հիմնարկութիւնն իսկապէս իր կոչմանը բարձրացնելու մասին։ Բ. Մ.

—

Ա խ ա լ ք ա լ ա ք, 17 յունիսի

Ամսիս 8-ին տեղիս դպրոցների դահլի-ճում կայացաւ դպրոցական տարեկան ակտը։

Ցերեկվայ ժամը 11-ին հանդէսը բացվեց և դպրոցի երգեցիկ խումբը ուսուցիչ Տ. Տօնականեանի ղեկավարութեամբ քառա-ձայն երգեց մի քանի երգեր։ Ապա պ. Տօ-նականեանը հաշիւ տուեց հասարակութեա-նը, թէ վերջացող 1907—8 ուսումն. տա-րում քանի աշակերտ է ունեցել տեղիս ու-սումնարանում, նրանցից քանի հոգի են փոխադրվել աւելի բարձր դասարաններ. յայտնեց նոյնպէս և ուսուցիչների և սրանց ցենզի մասին, ինչպէս նաև գրադարանի և դպրոցական այլ հոգսերի մասին։

Ուսումնական մասի հաշւետուութիւնից յետոյ՝ հոգաբարձու Յ. Մեծատունեանը պարզեց դպրոցի նիւթական աննախանձելի վիճակը հասարակութեան առաջ և շեշտեց այն հանգամանքը, որ դպրոցը շատ խար-խուլ վիճակի մէջ է գտնվում և կարօտ է նորոգման։

Գ. Մեծատունեանի համարատուութիւնից յետոյ՝ աշակերտ-աշակերտուհիները ոտա-նաւորներ արտասանեցին, որից յետոյ դպրոցի շրջանն աւարտողներին վկայական-ներ բաժանեցին։

Հանդիսին ներկայ էր երկսեռ բազմաթիւ հասարակութիւն։ Գաւառացի

—

Ն ա ր ս, 19 յունիսի

Ամսիս 15-ին քաղաքիս հայ-կաթօլիկնե-րի ուսումնարանում ժողով էր նշանակված մի քանի հերթական հարցերի, գլխաւորա-պէս նոր հոգաբարձու ընտրելու համար։ Քուէարկվեցին և ընտրվեցին նոր հոգա-բարձուներ։ Նորընտիր հոգաբարձութեան կազմը մեզ յոյսեր է ներշնչում, որ կարելի կը լինի ապագայում լաւ հիմքերի վրա դրված տեսնել դպրոցը, որը համարեա քայ-քայման վիճակի էր հասել վերջին շրջա-նում։ Հայ կաթօլիկ

—

Ա խ ա լ ց խ ա, 19 յունիսի

Ախալցխայի հայոց երկսեռ դպրոցների ուսումն. տարեշրջանը մի կերպ վերջացաւ և սաներին մանկավարժ. ժողովի որոշ-մամբ, առանց քննութիւնների, վկայական-ներով արձակեցին մինչև եկող ուսումն. տարին։ Մի կերպ եմ ասում, որովհետև մեր «ապահովված» դպրոցները, շնորհիւ աննընդունակ ղեկավարների, հետզհետէ յե-տադիմում են։ Դպրոցական պատրաստի գումարի սակաւութեան պատրուակով, այս տարի դպրոցի բաժանմունքների թիւը զգալի կերպով հոգաբարձութիւնը պակա-սեցրել էր. անցեալ տարվայ 24 բաժան-մունքի տեղ՝ բացված էր հազիւ 16 ը, իսկ նորեկ սաների ընդունելութիւն բնաւ չը կար։ Բացի դրանից՝ 5-րդ տարվայ դասա-րանն չը բացվեց, որով հարիւրաւոր մա-նուկներ զրկվեցին կրթութիւնից։ Անցեալ տարվայ 1200 աշակերտ-աշակերտուհինե-րից այս տարի մնացել էին 900 հոգի, ո-րոնց մեծամասնութեան վրա հոգաբարձու-թիւնը չը տեսնված թոշակներ նշանակելով (14—12—10—8—6 ր. ևայլն)՝ օրական հա-ցի կարօտ ծնողների մօտ 100 զաւակներ, անկարող լինելով այդքան թոշակագրամը վճարել, դպրոցից դուրս արտաքսվեցին։ Արտաքսվածներից մօտ 80 հոգի յետոյ ձրիապէս յաճախեցին տեղիս հայ-կաթօ-լիկների մասնաւոր դպրոցը, որը նիւթա-պէս այնքան խեղճ է, որ հազիւ նուէրներ-ով և ներկայացումների արդիւնքով է պահվում։

Այս տարվայ ուսուցչական խումբը նոյն-պէս կազմված էր անյաջող։ Ծնողներից միշտ անբաւականութիւններ էին լսվում դասաւանդութեան թուլութեան համար։ Տեսուչ Յ. Իւսուֆեանի վերաբերմամբ, տարվայ սկզբից, յոյսեր էինք տածում, սակայն սխալվեցինք. Նրա վարչական ան-ընդունակութեան շնորհիւ ամբողջ տարվայ մէջ դպրոցում ուսուցչ. խմբի մէջ երկպա-ռակութիւններն անպակաս էին։ Չը նայե-լով որ դպրոցում 23 ուսուցիչներ կային, սակայն ամբողջ տարվայ ընթացքում գոնէ դպրոցական մի հանդէս չը տուին՝ ժողո-վրդին ծանօթացնելու համար դպրոցի ներ-քին կեանքի հետ։ Փակվելու օրերին յոյս ունէինք, որ գոնէ այժմ դպրոցական ակտ կազմելով կը հրաւիրեն ժողովրդին, սա-կայն կրկին ունայն։ Այն ինչ՝ կարևոր էր ժողովրդին ծանօթացնել դպրոցի տուած արդիւնքի մասին։

Փետրվարի վերջերին տեսուչ Իւսուֆեա-նը յայտարարեց հասարակութեանը, որ մի խումբ ուսուցիչներ պէտք է Ախալցխայի անգրագէտ և կիսագրագէտ հասակաւոր-ների համար երեկոները դասընթացքներ հիմնեն, ուստի ցանկացողները թող գնան իր մօտ ցուցակագրվելու։ Սակայն տարին լրացաւ և այդ յայտարարութիւնը մնաց ․․․ մնաց և գործնականութիւն երբեք չը ստացաւ։

Սակայն, այս տարի, եթէ մի մխիթա-րական գործ կար, այդ մեր դպրոցի մի քանի ուսուցիչների առանձին գործունէու-թիւնն էր։ Տեսնելով որ դպրոցի վարչու-թիւնը 5-րդ տարվայ դասարան չէ բանա-լու, այդ մի խումբ ուսուցիչները (6 հոգի), օր. Ս. Գալաչեանի ղեկավարութեամբ, հա-ւաքեցին դպրոցի անցեալ տարվայ 4-րդ բաժանմունքից դուրս եկած 19 աշակեր-տուհիների մի առանձին բնակարան և ե-րեկոները ձրիաբար պարապեցին նրանց հետ 5-րդ տարվայ դասընթացքը, հետևեալ առարկաներից՝ հայոց, ռուսաց և ֆրանսե-րէն լեզուներ, թուաբանութիւն, հայոց և ընդհ. պատմութիւն, ընդհ. աշխարհագրու-թիւն, բնագիտութիւն, նկարչութիւն ևայլն։ Աշակերտուհիները բաւական առաջադիմու-թիւն են ցոյց տուել, ուստի, երբ այս օ-րերս փակեցին այդ մասնաւոր դպրոցը, մի խումբ քաղաքացիներ հաւաքվեցին այդտեղ և, լսելով աշակերտուհիների զգա-լի առաջադիմութիւնները, իրանց գոհունա-կութիւնը յայտնեցին այդ անկաշառ ուսու-ցիչներին։ Եթէ նոյն ուսուցիչները եկող տարի մեզ մօտ լինեն, կրկին ձրիաբար պարապելու են 5-րդ և 6-րդ տարվայ դասընթացքները։ Մխական

—

Ա շ տ ա ր ա կ, 15 յունիսի

Չը նայած որ մեր գիւղը Կովկասում ամենահարուստ գիւղերի շարքում կարելի է դասել, բայց մեր տեղական երկդասեան երկսեռ դպրոցը խիստ աննախանձելի վի-ճակի մէջ է գտնվում։ Դրա պատճառը ոչ թէ միջոցների սղութիւնն է, այլ ուղղակի այն ախտը, որ կոչվում է թայֆայականու-թիւն։ Երբեմն լինում են մարդիկ, որոնք ասպարէզ են գալիս գործելու գիւղական հասարակական շրջանում, բայց այդպիսի-ներին էլ հակառակ թայֆան թոյլ չէ տա-լիս հանգիստ գործելու, անհամար խոչըն-դոտներ է յարուցանում նրա առաջ։ Լինում են և այնպիսիները, որոնք՝ չը նայած հրա-պարակ են իջնում գործելու՝ հասարակու-թեան վստահութիւնը չը վայելելով անաջո-ղութեան են հանդիպում իրանց գործունէու-թեան հէնց սկզբին։ Յ. Այվազեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Վրաստանի թեմի հայոց առաջնորդը շրջաբերականով կարգադրել է իր թեմի բոլոր եկեղեցիներում Վարդավառի և Աս-տուածածնի կիրակի օրերը գանձանակ շրջեցնել Ալէքսանդրօպոլի հեղեղից փաս-ված աղէտեալներին նպաստելու համար և ժողոված գումարն ուղարկել Ալէքսանդրօ-պոլի քաղաքագլխին։

◆ Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Սրանով հասարակութեան լուրջ ուշադրու-թիւնն ենք հրաւիրում վերջերս տեղի ու-նեցած մի ամենազզուելի արարքի վրա, որի մասին սակայն մինչև այժմ լրագիր-ներում չը գրվեց, ինչպէս սովորաբար գրվում է նման դէպքերի մասին։ Չը գրը-վելու պատճառը գլխաւորապէս այն է ե-ղել, որ սրիկայական գործողութեանը զոհ գնացածները անպատւաբեր են համարել յայտնելու իրանց հետ պատահածի մասին ոչ թէ միայն լրագրութեան, այլ և իրանց մտերիմներին։ Սրանից մի քանի օր միայն առաջ, Բոտանիկական այգուց վեր՝ Կօջոր տանող խճուղու մօտերքը, երեկոյեան ժա-մը 9-ից յետոյ, տեղի է ունեցել հետևեալ դէպքը։ Վերը յիշած վայրից երբ զբօսնող հասարակութեան մեծամասնութիւնը վե-րադառնում է տուն, այդ ժամանակ մի քանի սրիկաներ, օգտվելով գիշերվայ մը-թութիւնից և համարեա թէ իրանց միայ-նակութիւնից, շրջապատում են մի երի-տասարդ պարոնի, որը նստած մի օրիորդի հետ՝ խօսելիս է լինում, և ատրճանակը ուղղելով պարոնի կրծքին, հրամայում են տեղից չը շարժվել և ձայն չը հանել, հա-կառակ դէպքում սպառնում են սպանել, իսկ օրիորդին նոյնպէս սպանել սպառնա-լով՝ մի քանի քայլ հեռացնում են նստած տեղից և... անասնական կրքերը յագեց-նելուց յետոյ, թողնում անհետանում են։ Նման դէպք կատարվել է արդէն երեք ան-գամ, և այդ խայտառակ գործողութեան հե-ղինակները իրանց համար պրոֆէսիա են դարձրել այդ լրբութիւնը»։

◆ Յունիսի 24-ին կայացաւ Թիֆլիսի մանր առևտրականների արհեստակցական ընկերութեան անդամների ընդհանուր ժո-ղովը։ Քննութեան խնդիրը, ինչպէս յայտնը-ված էր, այն էր, թէ ինչ միջոցներ պէտք է մշակել դրամաշորթութեան և գողու-թիւնների ու աւազակութիւնների դէմ։ Եղան շատ և կրքոտ վիճաբանութիւններ, որոնք յանգեցին վերջում նրա կէտին, որ նախ քան կառավարութեան թոյլտուութեամբ միջոցներ մշակելը, հարկաւոր է մամուլի միջոցով կոչ անել բոլոր շահագրգռուածներին և դրամաշորթներին և գողերին յետ կենալ իրանց վատ քայլերից և հան-գիստ թողնել առևտրականներին։

◆ Վրաց թատրոնը առաջիկայ թատրո-նական սէզոնի համար կապալով վերցրել է ռուս դերասանուհի Եավորսկայան, որը պայմանագրով թոյլատրելու է վրաց խըմ-բին մի քանի ներկայացումներ տալ սէզոնի ընթացքում նոյն թատրոնում։

◆ Թէև քաղաքային վարչութիւնը հացի վերջին սակագինը որոշեց միայն երկու շաբաթվայ համար, բայց անցել է արդէն մի ամսից աւելի. բայց նա չէ մտածում նոր էժանացրած սակագին սահմանել, նկատի առնելով, որ քաղաքում վերջին օրերս ա-հագին քանակութեամբ ալիւր է ստացվել։

◆ Թիֆլիսի չերամապահական կայա-րանի նախկին կառավարիչ Շավրովը ար-ձակված է պաշտօնից։

◆ Զինուորական վարչութիւնը 600,000 րուբլով գնել է վրաց հոգևոր իշխանու-թիւնից վրաց հոգևոր սեմինարիայի նոր շինութիւնը, որի մէջ պատրաստւում ապրելու է պլաստուն կօզակների գունդը։

◆ Կովկասեան զինուորական շրջանի զոր-քերի գլխաւոր հրամանատարը հրամայել է անմիջապէս հասցնել կօմենդանտական վար-չութեանը մանրամասն տեղեկութիւններ— Թիֆլիսի զօրամասերը, վարչութիւնները և հաստատութիւնները չեն ստացել գումարներ բնակարանների համար քաղաքից, ո՞ր օրից և ո՞րքան է ստանալու նրանցից իւրաքանչիւրը։

◆ Երկրագործութեան մինիստրութիւնը, ցանկանալով մարգագործութեան և հողագոր-ծութեան տեխնիկներ պատրաստել գիւ-ղատնտեսական բարձր կրթութիւն ստա-ցած անձերից, դիմել է գիւղատնտես Տի-մօֆէևին՝ խնդրելով վարչութեանը ներկա-յացնել իր կարծիքները այդ հարցի ա-ռիթով։

◆ Բագու մեկնեց կովկասեան լեռնային վարչութեան կառավարիչ Բուգովիչը՝ Բա-գուի նաւթարդիւնաբերողների 26-րդ հեր-թական համագումարին նախագահելու հա-մար։

◆ Թիֆլիսի կառապանները դիմել են կենդանիների խնամատար ընկերութեան, խնդրելով խիստ միջոցներ ձեռք առնել վաշխառուների և գարի վաճառողների դէմ, որոնք գնելով գիւղացիներից մաքուր գարի, խառնում են նրան հողի հետ և այնպէս վաճառում։ Այդ տեսակ գարուց ձիերը սաստիկ հիւանդանում են և ան-պէտք են դառնում յաճախ աշխատելու։ Գտնելով այդ բողոքը արդարացի, ընկերու-թեան վարչութիւնը ձեռք է առել իրանից կախված բոլոր միջոցները այդ չարիքի դէմ կռիւ մղելու։

◆ Վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութիւնը և վրաց հնագիտական ըն-կերութեան վարչութիւնը մի քանի մասնա-գէտներ են հրաւիրել՝ վրաց թանգարան հիմնելու մի նախագիծ կազմելու համար։

◆ Յուլիսի 1-ից Նախալովկան դառնա-լու է առանձին ոստիկանական քաղաքա-մաս, որի կառավարութեան համար հաս-տատվում է նոր ոստիկանատուն (11-րդ) բաղկացած 4 թաղական հսկիչներից և 21 քաղաքապահ ոստիկաններից։ Այս ոստի-կանական մասի կազմակերպումը և հսկո-ղութիւնը յանձնված է 10-րդ քաղաքամասի պրիստաւ Լեվաշեվին։

◆ Յունիսի 23-ին, Ալազանսկի միջանց-քում, Գաբօ Սեմեօնովի բնակարանում գտել են Միրիմանեանի խանութից (Երե-ւանեան հրապարակ) գողացված ապրանք-ների մի մասը, 500 րուբլու արժողութեամբ։ Սեմեօնովը փախել է, իսկ ոստիկանութիւ-նը ձերբակալել է նրա ընկեր Մուսա Իբրա-հիմ-օղլուին։

◆ Կովկասի Փոխարքայի դիւանատան մէջ պարապմունքները այսուհետև սկսվելու են առաւօտեան ժամը 10-ին և վերջանալու են ցերեկվայ ժամը 3-ին։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յունիսի 24-ին դիմեց անդրկովկասեան եր-կաթուղիների վարչութեան, խնդրելով բանակցութիւններ սկսել քաղա-քի հետ քաղաքային այն 17 դեսեատին հողաբաժնի վճարի վերաբերութեամբ, որ գրաւված է Նաւթլուղում երկաթուղային պէտքերի համար, որի գրաւման համար չէր ստացված բարձրագոյն ուկազ, և, հա-մաձայնութեան դէպքում, նշանակել մի ներկայացուցիչ բանակցութիւնների համար։ Հակառակ դէպքում քաղաքը պահանջում է այդ հողաբաժնի գնահատութեան գործը յանձնել դատարան գնահատիչ յանձնա-ժողովին։

◆ Թիֆլիսի Թնդանօթային պահեստի կառավարիչը դիմել է քաղաքային վարչու-թեան, խնդրելով հարկադրել Արսէնալի զաւիվերի տանուտէրերին մայթեր շինել ի-րանց տների առաջ։ Նոյն տեսակ խնդիր-քով նա սկզբում դիմել էր ոստիկանա-պետին։

◆ Անգլիական «Բիսլէր և ընկ.» ֆիր-ման դիմել է երկրագործութեան գլխաւոր վարչութեան, խնդրելով ստիպել կովկա-սեան գիւղատնտեսական ընկերութեան— վճարել ֆիրմային 275 ֆունտ ստերլինգ այն պղնձէ արջասպի համար, որ ընկերու-թիւնը բերել է տուել ֆիրմայից։

◆ Երկուշաբթի օրը թէև նշանակված էր քաղաքային դումայի վերջին նիստը, ուր քննվելու էր 42 գործ, բայց կրկին մնացին մի քանի գործեր անքննելի։ Այդ մնացած գործերը քննելու համար մտադրութիւն կայ գալիք երկուշաբթի նշանակել մի նիստ ևս, որը կը լինի արդէն վերջինը։

◆ Կովկասեան զինուորական շրջանի շտաբը յունիսի 23 ին գնաց Կօջոր։

◆ Ֆինանսների մինիստրութիւնը կար-գադրել է, որ Անդրկովկասի զեմստվային նախահաշւի նախագիծը ապագայ զեմստ-վային շրջանի համար, ինչպէս և երեք տարվայ ստուգված զեմստվօ-տնտեսական հաշիւները ուղարկվեն մինիստրութեան ան-պատճառ մինչև սեպտեմբերի 1-ը։

◆ Երևանի, Կարսի և Ջուլֆայի երկա-թուղագծերը կառուցող ինժեներ Ե. Վուր-ցելը նշանակված է նոր երկաթուղագծեր կառուցող վարչութեան կառավարիչ։

◆ Յունիսի 22-ին Կօրուլէտում, երեկո-յեան ժամը 8-ին, իր սեփական ամարանո-ցի բակում, անյայտ մարդկանց ձեռքով սպանվել է անդրկովկասեան նաւթախողո-վակների վարչութեան կառավարիչ ինժ. Բորիս Րօզէնֆէլդը։ Նրա մարմինը այսօր առաւօտեան կը բերվի Թիֆլիս։

◆ Վրիպակ.—«Մշակի» № 137-ում լոյս տեսած Ղ. Տէր-Սարգսեանի՝ խմբագրու-թեան ուղղած նամակում մի երկու սխալ-ներ են սպրդել։ Նամակի սկզբում լոյս է տեսել՝ ...«Յօդուածագիրը արդարացնում է պ. Աւետեանին, սակայն վերջինս... փա-խուստ տուաւ մեղաւոր կէտերին պատաս-խանելուց»․ պիտի լինի՝ «մեղադրող կէ-տերին...» ևայլն։ Նոյնպէս՝ նոյն նամակի մի այլ տեղում սխալմամբ լոյս են տեսել՝ «ապօրինի մայրը» բառերը. պէտք է լինի՝ «ապօրինի մասնակցութիւնը եւ վճիռը»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Թիֆլիսի ոստիկանապետը առաջար-կել է բոլոր պրիստաւներին ծանուցագրեր ուղարկել իրանց քաղաքամասերի տանտէ-րերին և առաջարկել ամենակարճ ժամանա-կամիջոցում կարգի բերել իրանց տների մայթերը։

◆ Թիֆլիսի ժամ.-գեներ.-նահանգապետի կարգադրութեամբ Թիֆլիսցիներ — Կարա-պետ Մուրադեան, Մնացական Նազարեան, Պօղոս Մկրտչեան, Երևանի Ն. Ազի գիւղի բնակիչ Ստեփան Յարութիւնեան և Թիւր-քահպատակ Աւետիս Կալաչեան Ակօբ-օղլի, իբրև վնասակար անձինք հասարակական հանգստութեան և պետական կարգ ու կա-նոնի համար, աքսորվում են—Աւետիս Կա-լաչեան Ակօբ օղլին՝ Օրէնբուրգի նահանգը զինւ. դրութեան ամբողջ ժամանակամիջո-ցում, իսկ Մնացական Նազարեանին, Պօ-ղոս Մկրտչեանին և Ստեփան Յարութիւն-եանին արգելվում է ապրել գեներալ-նահան-գապետութեան սահմաններում մի տարով։

◆ Այսօր, ոստիկանապետի կարգադրու-թեամբ, ոստիկանները կանգնելով էլեկտրա-քարշի կանգման տեղում, ստուգելու են թէ արդեօք էլեկտրաքարշի վատմանները և կօնդուկտորները ունե՞ն իրանց նշանակները թէ՞ ոչ։

◆ Յունիսի 24 ին, առաւօտեան ժամը 9-ին, Քութայիսի նահ. Բաճա գիւղի բնա-կիչ Եւստաֆիա Միլօզաձէի բնակարանում, որ գտնվում է Պրիւտսկի փողոցում, № 27 տանը, կրակի հետ անզգոյշ վարվելուց հըր-դեհ ծագեց, որը հանգցրեց հրդեհաշէջների խումբը։ Տունը ապահովագրված է 14,000 րուբլով։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

◆ Լուրերին նայած, մինիստրների խոր-հուրդը այն միտքն է յայտնել, որ պէտք է կրճատել վիբօրգցիների բանտարկութեան ժամանակը միայն ամնիստիայով, որը սպասվում է յուլիսի 30-ին, կայսերական տօնի օրը։ Պատիժը կրճատվելու է մի շա-բաթով։

◆ Ժուռնալիստների համագումարում պատուաւոր նախագահներ ընտրվել են Արսէնիէվ և Կորօլէնկօ, իսկական նախա-գահներ—Մակսիմ Կովալէվսկի, Ֆեօդորով և Միլիւկով։ Ցանկութիւն է յայտնվել, որպէսզի բոլոր հրատարակութիւնները Տօլստոյի յոբելեանին նուիրեն յոբելեանի օրը լոյս տեսած համարների մեծ մասը, նաև պրօպագանդա մղեն, որ յոբելեանի օրը յաւերժացվի Տօլստոյի անունով ու-սումնարաններ և հասարակական հաստա-տութիւններ հաստատելով։ Համակրանքով է ընդունվել Բոգուչարսկու զեկուցումը՝ Տօլստոյի անունով գրական տուն—թան-գարան հիմնելու մասին։

◆ Ծովային և առևտրի մինիստրութիւն-ների միջև միջնադէպ է ծագել։ Բանը նը-րանումն է, որ հանգուցեալ մինիստր Ֆի-լօսօֆովի ցանկութեամբ Բագուի մօտ պէտք է բանւորական կայարաններ հաստատվէին, որոնց համար արդէն յատկացվեց ծովային մինիստրութեան հողաբաժինը։ Մինչև այժմ ծովային մինիստրութիւնը դիմել է առև-տրի մինիստրութեան, պահանջելով վճարել այդ հողաբաժնի համար 12,000 րուբլի ամեն տարի իբրև կապալի վճար։ Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութիւնը եռանդով բողոքում է այդ պահանջի դէմ։

◆ Սօց.-դեմօկ. ֆրակցիան վճռել է նիւթեր ժողովել Դումային հարցապնդում անելու համար այն դէպքերի մասին, որոնք տեղի ունեցան Թիֆլիսում, Մետեխի բան-տում։ («Р. У.»)

◆ Յունիսի 17-ին Տերիօկում քաղա-քապետին ներկայացաւ մի անյայտ երի-տասարդ, տեսքով բանւոր, և յայտնեց, որ նա այն Պօլովնէվն է, որին որոնում են Հերցենշտէյնի սպանութեան գործի առ-թիվ։ Նա, «Рѣчь»-ի ասելով, չէ բացասում, որ ծանօթ է եղել այն անձանց հետ, ո-րոնց մեղադրում են Հերցենշտէյնի սպա-նութեան մէջ։ Նա եղել է նրանց ընկերը և մի քանի անգամ Տերիօկ է եկել նրանց հետ միասին։ Բացի դրանից, նա ներկայ է եղել Տերիօկի միտինգներին։ Հերցէն-շտէյնի սպանութեան օրը և յանցանքը կատարվելուց կէս ժամ առաջ նա մնաս բարով ասաց Լարիչկինին, որը մեղադըր-վում է իբրև իսկական մարդասպան։

◆ Յունիսի 18-ին, դատաստանական քննիչի կարգադրութեամբ, ինչպէս հաղոր-դում է «Новое Время»-ն, առաջարկված է եռանդուն միջոցներ ձեռք առնել որոնելու Գապօն քահանայի մարդասպանի կնոջը՝ Օլգա Րուտենբէրգին։

ՄԱՄՈՒԼ

Թիֆլիսում հրատարակվող «Голосъ Кавказа» թերթը իր երէկվայ համարում յայտ-նում է, որ նա ստիպված է դադարեցնել լրագրի հրատարակութիւնը։

«Մենք ստիպված ենք,—ասում է թերթը, դադարեցնել մեր լրագրի հրատարակու-թիւնը։ Ընթերցողի հարցմունքին՝ ինչու, մենք պէտք է պատասխանենք՝ որովհետեւ անհնարին է համաձայնեցնել համոզմունքները պահանջների հետ եւ անհնարին է յարմարվել «ռօպէին»։

Լրագիրը բացատրում է, որ հիմնելով թերթը 3 տարի առաջ՝ նրա ղեկավարնե-րի նպատակն էր «ստեղծել մամուլի ան-կախ ռուս օրգան ծայրերկրում և իրավանն ծառայութիւն մատուցանել բազմաչարչար մայր-հայրենիքին, որ շրջապատված էր մո-լորութիւնների և ստութեան թանձր մշու-շով։ Բայց այսօր այդ ղեկավարները վըշ-տով պէտք է ասեն, որ նրանց նուիրական միտքը չիրագործվեց, չը նայելով իրանց անխոնջ ջանքերին»։

*

«Մեր Ձայնը» թերթը, Մոսկվայի մի թըղ-թակցի բերանով (Առ-Ձէն), խօսելով «Մշա-կի» բանած գիրքի մասին կաթողիկոսական հարցում, չէ կարողանում հասկանալ, թէ ինչ է պատճառ, որ մենք պաշտպանում ենք Իզմիրլեանի կանդիդատութիւնը։ Մի աւելորդ անգամ մենք ստիպված ենք կըրկ-նել, որ 1) ճանաչելով հանդերձ Օրմանեան պատրիարքի բոլոր արժանաւորութիւննե-րը, 2) ընդունելով որ կաթողիկոսութեան համար առաջարկված բոլոր կանդիդատնե-րի մէջ նա նոյնպէս լուրջ թեկնածու է հանդիսանում, մենք այնուամենայնիւ կը ցանկանայինք Լուսաւորչի գահի վրա բազ-մած տեսնել Իզմիրլեանին, որովհետև մենք այն կարծիքի ենք, որ Օրմանեանի կաթո-ղիկոսացմամբ կղերական գաղափարները և ուղղութիւնը կարող են տիրապետող տեղ գրաւել էջմիածնում։ Մենք ընդունում ենք նոյնպէս, որ Օրմանեան կարող է վերջ դնել էջմիածնի անկարգութեան, բարո-յական անկման, որ նրա օրով կար-գապահութիւնը խիստ կը լինի վանա-կանների և հայ հոգևորականութեան մէջ, որ նրա օրով տեղի չեն ունենայ այնպիսի տարօրինակ երևոյթներ, երբ անհամա-պատասխան անձինք կարող են հոգևոր դպրոցների ուսուցիչ և ղեկավար հանդի-սանալ, բայց այդ ամենի հետ միասին մենք ասում ենք, թէ Իզմիրլեան ունի այն առաւելութիւնը, որ նրա օրով ևս այդ բո-լորը կը կատարվի, բայց միևնոյն ժամանակ սահմանադրական ոգին և ուղղութիւնը կը զարգանայ հայոց եկեղեցու մէջ և հայոց եկեղեցին կը մնայ ժողովրդապետական։

Եթէ այսօր Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանը կենդանի լինէր, բնական է, որ նա կը լինէր մեր, և սիրում ենք հա-ւատալ, նաև հայ ազգի մեծամասնութեան ցանկալի կաթողիկոսացուն։ Իզմիրլեան սրբազանի մէջ մենք համոզված ենք գտնել մի երկրորդ Արիստակէս Սեդրակեան։ Թող-ցէ մենք սխալվում ենք, բայց մենք գոր-ծում ենք համոզմունքով և հակառակ ենք Օրմանեանի թեկնածութեան ոչ թէ որևէ շահադիտական նկատումով, ինչպէս շա-տերը, այլ զուտ գաղափարով, որովհետև

յանձին նրա մենք վախ ունենք տեսնել կղերականութեան մի հզօր ներկայացուցչի։

Կարող է պատահել, և շատ հաւանական ենք նկատում, որ Օրմանեան սրբազան նոյնիսկ ընտրվի կաթողիկոս, բայց դա մեզ համար նշանակութիւն չունի։ Եթէ նա, դառնալով կաթողիկոս, կը հանդիսանայ այն, ինչ որ մենք կարծում էինք, այն է ներկայացուցիչ ուժգին կղերականութեան, մենք մեզ անպարտ կը համարենք, իսկ եթէ նա, հակառակ մեր ակնկալութեան, կը հանդիսանայ կաթողիկոս նոյն ոգով և ուղղութեամբ, որը մենք գտնում ենք Իզմիրլեանի անձնաւորութեան մէջ, մենք առաջինը կը լինենք նրան շնորհաւորողը։ Եթէ Խրիմեանի ընտրութեան ժամանակ «Մշակը» և մշակական կուսակցութիւնը ընդդէմ էր Իզմիրլեանին, դրա պատճառն այն էր, որ նրան համարում էին մի անձն, որ գլխովին հակառակ է ժողովրդապետական և դեմօկրատական սկզբունքներին. բայց երբ փորձը և յետագան ցոյց տուին, որ այդ կարծիքը սխալ էր, մենք այսօր պաշտպանում ենք նրա թեկնածութիւնը, և դա մեր ուղղամտութեան, անկեղծ համոզման ապացոյցն է։

*

Մի քանի խօսք և «Երկրի Ձայնը» թերթին։ Մենք տեսնում ենք, որ պ. Տ. Զաւէն անուղղելի է, ուստի և աւելորդ ենք համարում շարունակել զբաղվել մի թերթով, որ արդէն իսկ իր ուղղութեամբ դատապարտված է մահվան։ Անազնիւ հակառակորդների դէմ ամենալաւ զէնքը—արհամարհանքն և լռութիւնն է։

*

Ստացանք «Տարազ» շաբաթաթերթի № 7-ը, որ կազմված է բաւական հետաքրքրական։ Տպված է շքեղ, լաւ թղթի վրա և ունի բազմաթիւ պատկերներ—Իզմիրլեանի, Օրմանեանի, Սուքիաս արքեպիսկոպոսի, Խարախանեան վարդապետի, նորերս վախճանված բանաստեղծ Գ. Դոդոխեանի, կապիտալիստ Մանթաշեանի, գրող Խ. Մալումեանի, Պարիզի հայոց եկեղեցու։ Կան և մի քանի Թիւրքահայ եպիսկոպոսների համառօտ կենսագրութիւնները։ Ինչ վերաբերում է Տ.-ի յիշողութիւնների այն կտորներին, որոնք վերաբերում են Խրիմեանին և Սեդրակեանին պէտք է ասենք, որ «Մըշակի» և Սեդրակեանի վարմունքը հանգուցեալ Խրիմեանի մասին միակ արժանավայել ընթացքն էր, որ կարելի էր գործադրել։ Յամենայն դէպս Տ. Նազարեանի եռանդը անսպառելի է։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, 21 յունիսի

Արդէն ճշմարտութեան մի մասը գտայ։ Հիմա առաջին պարտքս եմ համարում հրապարակով ներողութիւն խնդրել պ. պ. Գ. Տ. Մ.-ից և Կ. Կ.-ից, որոնց անունները յակամայից յիշել եմ յունիսի 10-ին գրած իմ յօդուածի մէջ և, հակառակ էտիկայի ընդունված կանոնների, մի մասնաւոր խօսակցութիւն հրապարակ հանել։

Ես այլ ևս այն խնդրի ետեւից չեմ ընկնի, որ ապացուցանեմ թէ իմ գրածներից որն է ճշմարիտ և որը՝ ոչ։ Ներողութիւն եմ խնդրում նոյն իսկ պ. Լէօից, որ այդպիսի ճանապարհով իրան խօսեցրի։

Իմ առաջին յօդուածի նպատակն էր, որ ճշմարիտ խօսքը լսէինք։ Եւ թէպէտ այժմ ամբողջովին չը լսեցինք, բայց կայ մեր առաջ պ. Լէօի հերքումը։ Աշխատենք թղթի վրա գրված փաստերի մէջ իսկական ճշմարտութիւններ որոնել։ Ահա թէ ինչպիսի ծառայութիւն մատուցեց իմ անէտիկական յանցաւոր վարմունքը։

Արդ, ճշմարտութիւնը այս է, որ պ. Լէօն այժմ, երբ հասարակ մահկանացուներից մի ոմն՝ հակառակ ընդունված քաղաքավարութեան՝ հրապարակ է հանել մի մասնաւոր խօսակցութիւն,—հրաժարվում է իրան վերագրված խօսքերից և գրում է. «Ոչ «Մշակի» և ոչ «Վտակի» մէջ տպված հաշիւներում ես երբեք չեմ տեսել իմ ասածների գոնէ մօտաւոր ճշմարտութիւնը, ուստի և չեմ ընդունում, որ այստեղ (այսինքն «Վըտակի» մէջ?) գրուածները իմ իսկական խօսքերը լինէին։

Ուրեմն, պ. Լէօն չէ ասել. «Աշըգեանը իր պատրիարքութեան առաջին շրջանում բողոքում էր, իսկ երկրորդ շրջանում սողում. Օրմանեանը 12 տարի սողում է աւելի քան Աշըգեանը»։ Այս ազեղ և վիրաւորական ձևի արտայայտած միտքը «Վտակի» թղթակցի ստեղծածն է. այս է ասում պ. Լէօն. և եթէ ոչ «Մշակի» և ոչ «Վտակի» մէջ գրըվածներում չէ տեսել իր ասածների գոնէ մօտաւոր ճշմարտութիւնը, ինչո՞ւ պ. Լէօն իսկոյն և եթ չէ հերքել, ինչպէս որ Խաժակը հերքեց իր խօսածների մասին։ Կարծեմ ուրիշ տեղերի մարդիկ չէին կարող գուշակել, թէ նրա ասածների որ մասն է ճշմարիտ և որը հնարած։

Նոյնպէս պ. Լէօն շատ լաւ գիտէր, որ իր անունից ասված այդպիսի անպատշաճ խօսքեր վիրաւորական են մի հասարակական գործիչի համար, որ հեղինակութեամբ իրանցից պակաս չէ և ունի համոզված կուսակիցներ. Նա այդ էլ կարդաց ու լուռ մընաց։

Պ. Լէօի հերքումը կարդալուց յետոյ յակամայից այս եզրակացութեան ենք հասնում. մասնաւոր խօսակցութեան ժամանակ, զանազան անկիւններում կարող ենք դատապարտել այս կամ այն երևոյթը և կամ մի որևէ կազմակերպութիւն, ասելով թէ մենք կործանվում ենք, ջնջվում, իսկ հրապարակով լռութեամբ կարող ենք քաջալերել այդ կործանողներին։ Այսպիսի վերաբերմունքը առաքինութիւն է, իսկ մասնաւոր խօսակցութիւնը՝ ճշմարտութիւնը վերականգնելու նպատակով հրապարակ հանելը՝ յանցանք է ըստ պ. Լէօի։ Սրա պատճառը դարձել մեր ժամանակակից «բարքերի գլխիվայր ընթացքն է»։ Այսպէս է սնվում, մեծանում ժամանակակից հայ ինտելիգենցիան։ Ուրեմն մենք պէտք է հաշտվենք այդ վիճակի հետ էլ։

Մի րոպէ էլ ընդունենք, որ պ. Լէօն ոչինչ չէ խօսել, որ դաշնակցականների դէմ արած յարձակումները, Ալաշկերտի գիւղի դէպքի նկարագրութիւնը, որ Օրմանեանին նամակ գրելը և նրանից երեսփոխանական ժողովների արձանագրութիւնները խնդրելը և այլ բոլորը «շինվել, սարքվել են Լեոն Աղախանեան անունով մի պարոնի յիշողութեան մէջ»։ և պ. Լէօն այս դէպքում միմիայն «տարրական ազնւութեան և բարեխղճութեան դատը պաշտպանելու համար» հերքում է այդ ամենը մի երկտողով և զարմանքով էլ հարցնում. «Ո՞վ է տեսել, որ հրատարակվի 10 ամիս առաջ տեղի ունեցած մի մասնաւոր խօսակցութիւն»։ Միթէ այժմ մենք նոյն տեսակ զարմանքով չը պիտի հարցնենք։ Ո՞վ է տեսել, որ երբ մի հասարակական գործիչի (Օրմանեան լինի թէ Կիրակոսեան) հասցէին հրապարակով այդպիսի ազեղ ձևով մեղադրանք և վիրաւորանք հասցնեն, իրանց սրտի առատ ցեխից թափեն նրա վրա մի դիրք ունեցող հեղինակի անունից. և նոյն այդ հեղինակը, որ իսկոյն և եթ հերքում է 10 ամիս առաջ սարքված պատմութիւնները՝ «տարրական ազնւութեան և բարեխղճութեան դատը» պաշտպանելու համար, մի երկտողով չը հերքէ միմիայն մի քանի օր առաջ իր անունից հասցրած վիրաւորանքն ու մեղադրանքը մի ուրիշ հասարակական գործիչի։ Սա նշանակում է նոյն հեղինակի կողմից լռութեամբ քաջալերել այդ ազեղ վարմունքը, և դրա պատճառը դարձել «մեր բարքերի գլխիվայր ընթացքն է»։ Այս հարցի պատասխանը թող ինքը պ. Լէօն տայ։

Ումանց ձեռնտու էր, որ իրանց ճառերի մէջ Օրմանեան սողար, որպէս զի պատկերը և տպաւորութիւնը կատարեալ լինի իրանց դասակարգի համար։ Միթէ իրանց թերթի մէջ պ. Լէօին էլ այդպիսի խօսքեր վերագրեցին, որոնցից պարոնը այժմ հրաժարվելով հրաժարվում է։ Չէ՞ որ այս դէպքում իրանց ասածները ուժեղացնելու համար նրանք մի ուրիշ հեղինակութեան անուն պէտք է շահագործէին. այդպիսի մի հեղինակութիւն պ. Լէօն էր և մանաւանդ էլ յարմար էր շահագործելու. իսկ պ. Լէօն միայն մատների արանքով նայեց նրանց այդ քայլի վրա։ Ահա թէ որն էր մի ուրիշ ճշմարտութիւն, որ գտայ։

Այժմ «Վտակին» և մասամբ «Մշակին» է մնում Թիֆլիսում տեղի ունեցած խորհըրդակցութիւնների ժամանակ պ. Լէօի ասածների գոնէ մօտաւոր ճշմարտութեան մի մասը վերականգնելու, որպէս զի ընթերցողների համար ամենայն ինչ պարզ լինի*)։

Լեոն Աղախանեան

—

Պեատիգորսկ, 18 յունիսի

Մէկ և կէս տարի սրանից առաջ, «Ժայռի» 50-դ համարում, տ. Շելկօֆնիկեանը իր սիրուն յօդուածով կոչ էր անում և առաջարկում Երևանում բաց անել տնայնագործական գիշերօթիկ ուսումնարան հայ գիւղացիների համար։

Տիկնոջ համակրելի առաջարկը մեր գիւղացիութեան տնտեսական վիճակը բարձրացնելու ուղիղ ճանապարհն է. շատ ցանկալի է, որ այդպիսի ուսումնարաններ այլ տեղերում ևս բացվէին։

Դրա հետ միասին ժամանակ է ըմբռնելու, որ ներկայ կեանքի անխուսափելի և անյետաձգելի պահանջներից մէկն էլ գիւղատնտեսական-տեխնիքական ուսումնարաններն են. չը պէտք է աչքաթող անել այդ հանգամանքն ևս։

Տիկնոջ վերոյիշեալ կոչի առիթով մենք Պետերբուրգում հաւաքել էինք 385 ր. և Մոսկվայում տ. Օ. Մարգանեանի միջոցով 95 ր. և հաշւած տոկոսներն ու այլ նուիրատուութիւնը՝ ընդամենը 525 ր.։

Յիշեալ գումարը տ. Շելկօֆնիկեանի առաջարկութեամբ ուղարկել ենք Երևան յարգելի բժ. Տէր-Միքայէլեանին, որը ամեն ջանք գործ է դնում «Երևանի օգտակար գիտելիքներ տարածող ընկերութեան» առաջնորդութեամբ առաջիկայ աշնանը այդ դպրոցը բաց անել։

Ներկայ տողերը յայտարարում ենք յապահովութիւն նուիրատուների։

Բժ. Ա. Բուդաղեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

24 յունիսի

ԿԱԶԱՆ։ Երէկ կայացաւ կոմս Իգնատիեւի թաղումը։ Այրին ցաւակցական հեռագիրներ ստացաւ Նորին Մեծութիւններից, Մեծ Իշխաններից և Մեծ Իշխանուհիներից, մինիստրների խորհրդի նախագահից, արտաքին գործերի մինիստրից և ուրիշ բարձրաստիճան անձերից և հաստատութիւններից։

ԽԵՐՍՈՆ։ Արտակարգ պահնորդական դրութեան 26-րդ յօդուածի հիման վրա, նահանգապետը պաշտօնից հեռացրեց զեմսկի կառավարիչ Լուկինին յեղափոխական տարրերին մօտ լինելու և մասնակցելու համար։ Լուկինի գործը քննելու է նահանգական ատեանը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Առևտրի մինիստրը Պետական Դումային ներկայացրեց բանւորներին հիւանդութեան դէպքում ապահովելու, բանւորների ապահովագրութեան խորհուրդ հաստատելու օրինագիծը։

Պետական խորհրդի ֆինանսական մասնաժողովը առանց փոփոխութեան ընդունեց պետական 1908 թ. ծախքերի նախահաշւի վերաբերութեամբ Դումայի ընդունած որոշումը։

Պետական Խորհրդի ֆինանսական և օրէնսդրական մասնաժողովների միացեալ նիստում առանց փոփոխութեան ընդունվեց Դումայից ստացված օրինագիծը դատական վարչութեան ծառայողների ռոճիկները աւելացնելու մասին։

Արտաքին

24 յունիսի

ՍՕՖԻԱ։ Հոգեհանգիստ կատարվեց կոմս Իգնատիեւի յիշատակին։ Ներկայ էին իշխանի ներկայացուցիչները, ռուսաց դիպլօմատիական գործակալը գործակալութեան պաշտօնեաների հետ, մինիստրները, քաղաքի և հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչները։ Իշխանութեան միւս գաւառական քաղաքներում էլ կատարվում են հոգեհանգիստներ։

*) Մեր լրատուն աշխատել է կարելիին չափ հարազատօրէն արձանագրել ժողովում եղած ճառախօսութիւնները, և մենք գանգատներ չենք լսել աղաւաղումների մասին մինչև այժմ։ Անշուշտ կարող են խնդրի պարզելուն օգնել ժողովի քարտուղարներ պ. պ. Արամ Նազարեթեանը կամ Լ. Ղօրղանեանը, սթէ նրանք արձանագրել են ճառերը։ Խմբ.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՈՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Միխիթարեանց
Անցեալ տարիների նման ընդունում է՝ հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլովոդսկում, հիւրանոց «Ռոսսիա»։
(ա. օ.) 100—75

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ընդունում է
Ներքին եւ ջղային
հիւանդութիւն ունեցողներին
Պեատիգորսկում, Վերևի բուլվար № 14, տ. իշխ. Գիրէյի. Пятигорскъ, Верхній бульваръ, д. кн. Гирей. 30—19

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8.
(Ե. Հ. շ.) 100—83

ՄԻ ՀԱՅ ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
ցանկանում է
մանկաբարձական
պաշտօն ունենալ հայ գաւառներից մէկում։ Հասցէ՝ Пятигорскъ, Ограда армянской церкви, Артемію Ив. Попову, передать Асламазяну. 6—3

Յայտարարում եմ ի գիտութիւն թարգմանիչների
Որ հայերէն լեզուով արդէն
Թարգմանված է
Վ. Վ. ՊՐՕՏՕՊՕՊՕՎԻ
ՍԵՒ ԱԳՌԱՒՆԵՐԸ
պիէսան
ՄԱՐՏՕ
(Կ. Հ. շ.) 3—3

Պահանջեցէք իսկական պաղային ջուր
Մ. ԼԱԳԻՁԷԻ եւ ԸՆԿ.
կատարելագործված գործարան
Հոտը եւ անուշահոտութիւնը զերազանց
Գործարանին կից դէկօրատիվ բուսականութեամբ գեղեցիկ զարդարված տէրրասա, ուր կարելի է խմել սառուցի նման սառը ջուր։ Գործարանը գտնվում է Գօլովինսկի պրօսպէկտի վրա, Մանթաշեանի տանը։
Տէլէֆօն գործարանի № 411։
(Հ. Կ.) 10—3

Գաւառական
վարժուհի լինելով, 12 տարվայ այրի կին, կարողացել է իր սուղ միջոցներով կրթութիւն տալ իր հինգ որբ զաւակներին, որոնցից մեծը այս տարի աւարտելով գիմնազիան ի սրտէ փափագում է շարունակել ուսումը։
Խնդրվում է բարերար անձանց օգնել, ով ինչքան կարող է, մտցնել նրան համալսարան, որը աւարտելով լինելու է այդ բազմանդամ ընտանիքի կառավարողը։
Հասցէն. Հալաբար, Араратская № 19, կամ Веляминовская библіотека
5—4 Տիկ. Մանուկեան

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
ՀՈՂԱԲԱԺԻՆՆԵՐ
Ամառանոցի եւ այլ շինութեան համար։
Հողաբաժինները գտնվում են Ծղնէթ գիւղից ներքև, Կադետսկի կորպուսին պատկանող հողերի դիմաց։
Քառակուսի սաժէնը 25 կ. մինչեւ 80 կ.։
Կարելի է թէ կանխիկ փողով և թէ ապառիկ։
Հարցնել Աբրահամ Յակոբեանցին, Արմենանսկի բազար, Օկօլնի փող. № 1, վարսավիրի մօտ։

ԱԼՄԵՋԱ

Կովկասի և Անդրկասպեան երկրի միակ ներկայացուցիչը Ի. Ա. Սխօրաձէն է։ Գլխաւոր պահեստ և գրասենեակ «Ալմեզա»-ի
Тифлисъ, Пушкинская ул. № 15.

ԱՏԱՄԻ ՑԱՒԸ
ՇՈՒՏ հանգստացնելու
եւ ատամն ու լնդերը ամրացնելու
ԼԱՒԱԳՈՅՆ ՄԻՋՈՑՆ Է
ԱԼՄԵՋԱ
ՇԱՏ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ
ցուցահանդէսներում նուէրների է արժանացել
ԱՂՔԱՏՆԵՐԻՆ ՁՐԻ
ԲԺՇԿՈՒԹԻՒՆ
Այդպիսիներին խնդրում ենք դիմել Սխօրաձէի գրասենեակը, Пушкинская, 15.
Օտարաքաղաքացիներից կանխավճար ստանալով ուղարկում ենք վերադիր վճարով։
Դեղատներին զեղչ
Փոքրիկ. սրուակը 40 կ. Իսկական սրուակը 1 ր. 20 կ.
Գրաս. և պահեստի բաժանմ. Баку, Старо-Полицейская, № 14. Հեռագիրների հասցէ. Тифлисъ, Ахобадзе.
(Հ. շ.) 15—13

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ԿՕՇԿԵՂԷՆ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.
Ամեն տեսակ մօդայի ձևերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում։
Фабричное клеймо — С.Петербургъ
Իսկականը այս կլէյմօն ունի իր վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ	ԽԱՐԿՕՎՈՒՄ	ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ
ՄՈՍԿՎԱՅՈՒՄ	ՕԴԵՍՍԱՅՈՒՄ	ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ
ՌԻԳԱՅՈՒՄ	ՌՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ	ԹԻՖԼԻՍՈՒՄ
ԿԻԵՎՈՒՄ	ԿԱԶԱՆՈՒՄ	ՏԱՇԿԵՆՏՈՒՄ

Նիժէգօրօդեան տօնավաճառում
Իրբիտեան տօնավաճառում
ԳՈՒՄԱՐՈՎ ՎԱՃԱՌՔԸ
կատարում է
„ԼԷՕՊՕԼԴ ՆԵՅՇԵԼԼԵՐ“
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ.
ԱՅՍՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկական ռետին. մանուֆակտուրային ընկերութեան
Կրեմ եւ Այրետուրա կօշկեղէնի համար
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ. (Հ. Կ.) 100—38

Типографія „Экономія“ Ав. Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская ул. № 3.